3369

Emprunté à la

Cundinamarca

Paris 1870

28/0751

D-84

2010

28(075)
О-84

ՆԱԽԱՇԱՒԻՂ

ԳՐՕՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԸՍՏ

Ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ ՅՈՎՍԷՓ Ա. Ք. ՕՐԲԵԼԻ

Ա.

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Քրիստոնէական հաւատոյ

ՏՊԱԳՐԵԱԼ

Հրամանաւ Վեհափառ Հայրապետին մերոյ

Տեառն Գէորգայ Գ.

Ամենայն Հայոց Կաթողիկոսի

280
068-ОГ

ԹԻՖԼԻՍ

ՏՐԱՆԻ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ

(ընդ տեսչութեամբ Հ. Լենֆիանեան.)

1870

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI 1922
именна, Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՈՒՆ

Զայս Նախաշաւիղ Կրօնադիտութեան ընթերցեալ ըստ հրամանի Վեհափառ Հայրապետին մերոյ Տեառն Գէորգայ Դ. ամենայն Հայոց Կաթողիկոսի, ոչինչ տեսի ի սմա հակառակ ուղղափառ Վարդապետութեան Հայաստանեայցս սուրբ Եկեղեցւոյ:

Ի ՏՓԽԻՍ, 20 Յուլիսի
1870

Գաբրիէլ Եպիսկոպոս
Այվազեան:

Дозволено Цензурою. Тифлисъ. 20-го Іюля 1870 года.

108015-ԱՀ

80 28(075)
0-84
68-ОՐ
120112

Նորին Գերապատուութեան·

ՎԻՃԱԿԱՒՈՐ

Առաջնորդի Հայոց Վրաստանի և Իմերեթի

ՍՐԲԱԶԱՆ ՄԱԿԱՐԱՅ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՆՈՒԷՐ

Ի յիշատակ հոգւոց հանգուցեալ ծնողաց իւրոց Սարգսի և Շուշանայ տէր Պետրոսեանց:

ՑԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԷ

10083-90

ՆԱԽԱՇԱՒԻՂ

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԿԱՄ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Քրիստոնէական հաւատոյ

Հ. Ի՞նչ է կրօնն։

Պ. Կրօնն է ճանաչել, սիրել և պաշտել Աստուած։

Հ. Ի՞նչ է սովրեցնում մարդոյս կրօնը։

Պ. Կրօնը մարդոյս սովրեցնում է միջոցները, որով նա կարող լինի մօտենալ Աստուծոյն և միանալ նորա հետ։

Հ. Հարկաւո՞ր է մարդոյ կրօնը թէ ոչ։

Պ. Անշուշտ, պատճառ որ՝ կայ Աստուած երկնի և երկրի Արարիչ և Տէր, և առանց Աստուծոյ մարդս կարող չէ երջանիկ լինել։

Հ. Ի՞նչ է կրօնի առարկայն։

Պ. Կրօնի առարկայն Աստուած է, և Աստուծոյն վերաբերեալ ճշմարտութիւնքը։

Հ. Ո՞ր տեղ են պարունակւում Աստուածային ճշմարտութիւնքը։

Պ. Աստուածաշունչ գրոց, այսինքն հին և նոր կտակարանի մէջ:

Հ. Ի՞նչ պատճառաւ այդ սուրբ գիրքը Աստուածաշունչ կոչուեցաւ:

Պ. Այն պատճառաւ որ՝ Աստուածային ազդեցութեամբ և Հոգւոյն սրբոյ շնչմամբ գրուեցաւ:

Հ. Ո՞յք գրեցին Աստուածաշունչ գիրքը կամ հին և նոր կտակարանը:

Պ. Հին կտակարանը գրեցին մարգարէք, իսկ նորը առաքեալք:

Հ. Ո՞ր ուսումն է ամենից աւելի հարկաւոր մարդոյ:

Պ. Ուսումն քրիստոնէական կրօնի և ուղիղ հաւատոյ:

Հ. Ի՞նչ պատճառաւ:

Պ. Այն պատճառաւ որ՝ իբրև մարդ և քրիստոնեայ պարտիմ պարզ ճանաչել Աստուած, հաւատալ և պաշտել նորան, և անսխալ դաւանել այն եկեղեցւոյ խորհուրդները, որոյ մէջ ծնել և դաստիարակուիմ եմ:

Հ. Ի՞նչ պատճառաւ պարտիմ ճանաչել Աստուած:

Պ. Այն պատճառաւ որ՝ ինչպէս իմ ժամանակաւոր երջանկութիւնը, նմանապէս և իմ հոգւոյ փրկութիւնը կախւած է յԱստուծոյ, և առանց Աստուծոյ՝ մարդ կարող չէ երջանիկ լինել ոչ այս՝ և ոչ հանդերձեալ կենաց մէջ:

Հ. Ո՞ր եկեղեցւոյ մէջ ես ծնել:

Պ. Ես ծնել եմ Հայոց առաքելական եկեղեցւոյ մէջ, որ Թադէոս և Բարթուղիմէոս առաքելոց ձեռքով հիմնուեցաւ Հայաստանում:

Հ. Հաւատով ի՞նչ ես կոչւում դու:

Պ. Հաւատով կոչւում եմ Քրիստոնեայ, այսինքն Քրիստոսեան, Քրիստոսի աշակերտ, հետևող և դաւանող Քրիստոսի:

Հ. Քրիստոնէական հաւատոյ հիմն և ուսուցիչը ո՞վ է:

Պ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս:

Հ. Երբ սովրեցրեց Տէրն մեր Քրիստոս իւր վարդապետութիւնը:

Պ. Նախ ինքն երբ այս աշխարհիս վերայ էր, և ապա իւր յարութիւնից յետոյ առաքելոց ձեռքով:

Հ. Առաքեալք ի՞նչպէս տարածեցին:

Պ. Երբեմն գրով և երբեմն խօսքով:

Հ. Ինչ է սովրեցնում մեզ Քրիստոնէական վարդապետութիւնը:

Պ. Աստուած ճանաչել, հաւատալ, յուսալ, սիրել և ամենայն զօրութեամբ պաշտել նորան:

Հաւատ.

Հ. Ի՞նչ է հաւատը:

Պ. Հաւատն է պարզ ճանաչել, հաւանել և ընդունել այն ամէն ճշմարտութիւնքը, որ յայտնել է մեզ Աստուած:

Հ. Ճշմարիտ հաւատը ո՞րպիսի նշաններ կամ յատկութիւնք պիտի ունենայ:

Պ. Հաւատը պէտք է լինի հաստատուն՝ որ յաղթէ աշխարհի ամէն փորձութեանց. գործունեայ կամ կեն-

դանի՝ որ հաւատոյ հետ պիտի ունենայ և բարի գործք, պատճառ որ՝ հաւատը առանց բարի գործոց մեռալ է առանձինն։

Հ. Հաւատոյ գլխաւոր մասունքները ի՞նչ տեղ են պարունակւում համառօտիւ։

Պ. Հանդանակի, այսինքն հաւատամքի մէջ։

Հ. Ե՞րբ և ո՞ւր գրւեցաւ հանդանակը։

Պ. Նիկիա քաղաքում, ուր 325 թուին ժողովեցան երեք հարիւր տասնեւութ հայրապետք, և հերքելով Արիոսի մոլորութիւնը՝ հաստատեցին քրիստոնէական հաւատոյ ուղղափառութիւնը։

Հ. Քանի՞ հաւատալի մասունք կան հանդանակի մէջ։

Պ. Տասներկու։

Հ. Ո՞րն է առաջին մասը հանդանակի։

Պ. «Հաւատամք ՝ի մի Աստուած Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի, երևելեաց և անտեսանելեաց»։

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ առաջին մասը հաւատամքի։

Պ. Առաջին մասը հաւատամքի սովորեցնում է մեզ նախ՝ թէ կայ Աստուած և մի է։ Երկրորդ՝ թէ Աստուած մի է, բայց ունի երեք անձն (Հայր, Որդի և Հոգի սուրբ), այսինքն մի Աստուածութեան մէջ երեք անձն, և երեք անձանց մէջ մի Աստուածութիւն. մի բառով՝ Երրորդութիւն։ Երրորդ՝ թէ առաջին անձն սուրբ Երրորդութեան է Հայրն Աստուած։ Չորրորդ՝ թէ այս երեքսրբեանն Աստուած ստեղծել է երկինքը և երկիրը, և նորանց միջի երևելի և անտեսանելի արարածքը։ — Հինգերորդ՝ թէ Աստուած այս ամէն արարածքը

իւր ձեռին ունի, պահպանում է և կառավարում։

Հ. Ո՞րն է երկրորդ մասը հանդանակի։

2 Պ. «Հաւատամք և ՝ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ ծնեալն յԱստուծոյ հօրէ միածին, այսինքն յէութենէ հօր. Աստուած յԱստուծոյ, լոյս ՝ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն ՝ի բնութենէ հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ՝ի վերայ երկրի՝ երևելիք և անտեսանելիք»։

Հ. Ի՞նչ ենք սովորում այս մասից։

Պ. Սովորում ենք առաջինը՝ թէ երկրորդ անձն սուրբ Երրորդութեան է Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս։ Երկրորդ՝ թէ մի միայն է Որդին Աստուծոյ, և չկայ ուրիշ մէկը նորա նման Որդի Աստուծոյ։ Երրորդ՝ թէ Որդին Աստուծոյ անժամանակապէս ծնեալ է հօր Աստուծոյ էութիւնից և այն պատճառաւ նա անընկիզելի է և անվախճան, ինչպէս որ Հայրն Աստուած։ Չորրորդ՝ թէ Յիսուս Քրիստոս ճշմարիտ Աստուած է, ճշմարիտ յԱստուծոյ ծնած, և համագոյակից է հօր Աստուծոյ։ Հինգերորդ՝ թէ որդին Աստուծոյ չէ ստեղծած, այլ նա է ստեղծել ամէնը։

3 Հ. Ո՞րն է երրորդ մասը հանդանակի։

Պ. «Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծընաւ կատարեալապէս ՝ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով։ Որով էառ զմարմին, զՀոգի և զմիտ և զամենայն, որ ինչ է ՝ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք»։

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ այս մասը Հաւատամքի:

Պ. Սովորեցնում է մեզ, առաջինը՝ թէ Որդին Աստուծոյ երկնից իջաւ և մարդկային բնութիւնը առաւ, այսինքն մարմին, հոգի և միտք, և եղաւ կատարեալ մարդ և կատարեալ Աստուած, որով և յայտնուելով աշխարհիս վերայ, կոչուեցաւ Յիսուս, Քրիստոս, Մեսսիա, և Էմմանուէլ: Երկրորդ՝ թէ Յիսուս Քրիստոս ծնաւ Մարիամ սուրբ կուսից Հոգւով սրբով՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք: Երրորդ՝ թէ Յիսուս Քրիստոս եկաւ աշխարհք որ փրկէ մարդկանց այն մեղքից՝ որոյ մէջ ծնուելն նորանք և կան, և ազատէ այն մահից՝ որով դատապարտուած էր ամէն մարդ մեր նախահօր Ադամայ մեղքով:

Հ. Ո՞րն է չորրորդ մասը Հաւատամքի:

Պ. "Չարչարեալ, խաչեալ, թաղեալ:"

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ այս մասը:

Պ. Այս մասը սովորեցնում է մեզ առաջինը՝ թէ Յիսուս Քրիստոս շատ չարչարանք քաշելով՝ խաչուեցաւ, մեռաւ և թաղուեցաւ: Երկրորդ՝ թէ այս չարչարանքը քաշեց ոչ թէ իւր մեղաց համար, պատճառ որ ինքն անմեղէր և անարատ, այլ չարչարուեցաւ և մեռաւ՝ մեզ փրկելու համար մեղքից և մահից:

Հ. Ո՞րն է հինգերորդ մասը:

Պ. "Յերրորդ աւուր յարուցեալ":

Հ. Ի՞նչ ենք սովորում այս մասի մէջ:

Պ. Այս մասի մէջ սովորում ենք՝ թէ Յիսուս Քրիստոս

մարդկային բնութեամբ մեռնելուց յետոյ՝ երրորդ օրը յարութիւն առաւ:

Հ. Ո՞րն է վեցերորդ մասը Հաւատամքի:

Պ. "Ելեալ յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր":

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ այս մասը:

Պ. Այս մասը սովորեցնում է մեզ՝ թէ Յիսուս Քրիստոս իւր յարութիւնից յետոյ՝ քառասներորդ օրը համբարձաւ երկինքը նոյն մարմնով, և նստաւ Հօր Աստուծոյ աջ կողմը, հաւասար լինելով նորա հետ զօրութեամբ և փառօք:

Հ. Ո՞րն է եօթներորդ մասը Հաւատամքի:

Պ. "Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան":

Հ. Ի՞նչ ենք սովորում այս մասի մէջ:

Պ. Այս մասի մէջ սովորում ենք՝ թէ Յիսուս Քրիստոս միւսանգամ պէտք է գայ երկնքից իւր Աստուածային զօրութեամբ և փառօք՝ բոլոր մարդկանց դատելու համար՝ թէ կենդանեաց և թէ մեռելոց, և նորա թագաւորութիւնը վախճան չունի:

Հ. Ո՞րն է ութերորդ մասը Հաւատամքի:

Պ. "Հաւատամք և 'ի սուրբ Հոգին՝ յանեղն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս: Որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն, և բնակեցաւ 'ի սուրբսն":

Հ. Ի՞նչ ենք սովորում այս մասի մէջ:

Պ. Այս մասի մէջ սովորումենք առաջինը՝ թէ երրորդ անձն սուրբ Երրորդութեան է Հոգին սուրբ: Երկրորդ՝ թէ Հոգին սուրբ հաւասարակից է Հօր և Որդւոյ, և մենք պարտական ենք Հօր և Որդւոյ հետ հաւասար փառք և երկրպագութիւն տալ Հոգւոյն սրբոյ իբրև ճշմարիտ Աստուծոյ: Երրորդ՝ թէ մարգարէք և առաքեալք Աստուծոյ կամքը մարդկանց յայտնելու և սուրբ գիրքը գրելու ժամանակ՝ Հոգւոյն սրբոյ շնչմամբ էին խօսում և գրում: Չորրորդ՝ թէ երբ Քրիստոս մկրտուումէր Յորդանան գետի մէջ, Հոգին սուրբ իջաւ նորա վերայ աղաւնակերպ, և քարոզեց թէ Քրիստոս ուղարկուած է ի Հօրէ: Հինգերորդ՝ թէ Հոգին սուրբ բնակեցաւ սուրբերի մէջ:

Հ. Ի՞նչ ես հասկանում Հաւատամքի մէջ կարդալով "Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս":

Պ. Օրէնք, Մարգարէք և Աւետարան ասելով, հասկանում եմ Աստուածաշունչ գիրքը, այսինքն հին և նոր Կտակարանը:

Հ. Այդ խօսքերով ի՞նչ է սովորեցնում Եկեղեցին:

Պ. Սովորեցնումէ մեզ հաւատալ՝ թէ մարգարէք և առաքեալք ինչ որ խօսեցան և գրեցին, Հոգւով սրբով խօսեցան և գրեցին, և կամ թէ Հոգին սուրբն էր նոցա ուսուցիչը:

Հ. Ինչի՞ համար Հոգին սուրբ աղաւնակերպ իջաւ Քրիստոսի վերայ:

Պ. Նորա անմեղութիւնը ցոյց տալու և Աստուածու-

թիւնը յայտնելու համար, և վկայելու թէ՝ նա է աշխարհքիս ճշմարիտ Փրկիչը:

Հ. Ո՞րն է իններորդ մասը Հաւատամքի:

Պ. "Հաւատամք 'ի մի միայն ընդհանրական և առաքելական սուրբ Եկեղեցի":

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ այս մասը Հաւատամքի:

Պ. Այս մասը Հաւատամքի սովորեցնումէ մեզ, թէ ճշմարիտ Եկեղեցին Քրիստոսի Մի է, Սուրբ է, Ընդհանրական է և Առաքելական:

Հ. Ի՞նչ պատճառաւ Եկեղեցին Քրիստոսի կոչումէ Մի:

Պ. Այն պատճառաւ որ ամենայն քրիստոնեայք միաձայն հաւատով, յուսով և սիրով կապուած են մի Գլխոյ՝ այսինքն Քրիստոսի հետ:

Հ. Ի՞նչ պատճառաւ կոչումէ Սուրբ:

Պ. Այն պատճառաւ որ քրիստոնէական հաւատոյ ուսմունքը սուրբ է և անարատ, և թէ ամենայն քրիստոնեայք միրտութեամբ սուրբ աւազանի սրբուած են սկզբնական մեղքից:

Հ. Ի՞նչ պատճառաւ կոչումէ Ընդհանրական:

Պ. Այն պատճառաւ որ Քրիստոսի Եկեղեցին որ ազգից և լենի անխտիր ամէնին ընդունումէ իւր ծոցը, և տարածուած է աշխարհքիս ամէն կողմը, և անսասան պիտի մնայ և շարունակի մինչև աշխարհքիս վերջը:

Հ. Ի՞նչ պատճառաւ կոչումէ Առաքելական:

Պ. Այն պատճառաւ որ Քրիստոսի Եկեղեցին հաստատուած է առաքելական քարոզութեան հիման վերայ:

Հ. Ո՞րն է տասներորդ մասը Հաւատամքի:

Պ. «Հաւատամք 'ի մի Մկրտութիւն, յԱպաշխարութիւն 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղացն»:

Հ. Ի՞նչ է սովորեցնում մեզ այս մասը Հաւատամքի:

Պ. Այս մասը սովորեցնում է մեզ, առաջինը՝ Մկրտութեան խորհուրդը, այսինքն թէ աւազանի ծննդեամբ սրբւում է մարդս սկզբնական մեղքից: Երկրորդ՝ թէ մարդս ճշմարիտ ապաշխարութեամբ աղատւում է և թողութիւն է ստանում այն մեղքերից, որ մկրտութիւնից յետոյ է գործել:

Հ. Քանի՞ են խորհուրդք Եկեղեցւոյ:

Պ. Եօթն՝ Մկրտութիւն. Դրոշմ. Ապաշխարութիւն. Հաղորդութիւն. Ամուսնութիւն. կարգ և հիւանդաց օծումն:

Հ. Ի՞նչ է Մկրտութիւնը:

Պ. Մկրտութիւնն է խորհուրդ Եկեղեցւոյ, որ նշանակում է ջրով լուացումն յանուն ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, որով սրբւում է մարդս սկզբնական մեղքից, և որդեդիր է լինում երկնաւոր Հօր:

Հ. Ի՞նչպէս է կատարւում Մկրտութեան խորհուրդը:

Պ. Երեք անգամ երեխայն ընկղմելով աւազանի մէջ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, յօրինակ մահուան և երեքօրեայ թաղման Քրիստոսի գերեզմանի մէջ:

Հ. Ի՞նչ է Դրոշմը:

Պ. Դրոշմը Եկեղեցւոյ խորհուրդ է, որ աղօթքով և մեռոնով օծելով մկրտուածի զգայարանքը՝ ընդունում

է Հոգւոյն սրբոյ շնորհքը, որով զօրանում է և հաստատւում քրիստոնէական հաւատոյ և պատուիրանապահութեան մէջ, և Քրիստոսի զինուոր գրւելով՝ կոչւում է Քրիստոնեայ:

Հ. Ի՞նչ է Ապաշխարութիւնն:

Պ. Ապաշխարութիւնն է Եկեղեցւոյ խորհուրդ, որ զղջացած քրիստոնեայն խոստովանւում է Աստուծոյն քահանայի առաջ իւր մեղքերը, և նորա միջնորդութեամբ ընդունում է յԱստուծոյ թողութիւն, և սրբւում է այն մեղքից՝ որ մկրտութիւնից յետոյ է գործել:

Հ. Ի՞նչ է Հաղորդութիւնը:

Պ. Հաղորդութիւնն է Եկեղեցւոյ խորհուրդ, որ հացի տեսակաւ ճաշակում ենք Քրիստոսի մարմինը, և գինւոյ տեսակաւ ընդունում ենք նորա արիւնը, որով սրբւում ենք մեղքից, և միանում ենք Քրիստոսի հետ հոգւով:

Հ. Ինչո՞վ է կատարւում մեզանում այդ խորհուրդը:

Պ. Բաղարջ հացով և անջրախառն գինով:

Հ. Ի՞նչ հաւատալի բան կայ այս խորհրդոյ մէջ:

Պ. Այս է հաւատալին, որ այն հացը որ ընդունում ենք՝ է իսկապէս Քրիստոսի մարմին, և գինին իսկապէս Քրիստոսի արիւն:

Հ. Ի՞նչ է Ամուսնութիւնն:

Պ. Ամուսնութիւնն է Եկեղեցւոյ խորհուրդ, որով մարդու կին հաւատացեալ՝ միմեանց հաւանութեամբ և քահանայի օրհնութեամբ միաւորւում են, յօրինակ միաւորութեան Քրիստոսի Եկեղեցւոյ հետ, զաւակ

ծնանելու համար և սնուցանելու Քրիստոնէական հաւատոյ և Աստուծոյ պատուիրանապահութեան մէջ։

Հ. Ի՞նչ է կարգն։

Պ. Է խորհուրդ Եկեղեցւոյ, որով եպիսկոպոսը ձեռը դնելով նուիրելոյ վերայ, աղօթքով և սուրբ մեռոնով օծելով նորա ճակատը և ձեռքը, տալիս է հոգևոր պաշտօն հովուելու ժողովուրդը, և կատարելու եկեղեցւոյ սուրբ խորհուրդները։

Հ. Կարգը քանի՞ աստիճան ունի։

Պ. Եօթն. Դռնապանութիւն. Ընթերցողութիւն. Երգեցողութիւն. Ջահընկալութիւն. Կիսասարկաւագութիւն. Սարկաւագութիւն և Քահանայութիւն։

Հ. Ի՞նչ է հիւանդաց օծումն։

Պ. Է Եկեղեցւոյ խորհուրդ, որ քահանայն ձեռը դնելով հիւանդի վերայ և իւղով օծելով նորան՝ աղօթք է անում առ Աստուած. որով հիւանդը ընդունում է յԱստուծոյ մարմնոյ առողջութիւն և նեղելի մեղաց թողութիւն։

Հ. Առաքեալք ի՞նչպէս էին կատարում այդ խորհուրդը։

Պ. Երբեմն միայն ձեռը դնելով հիւանդի վերայ և աղօթելով, և երբեմն էս իւղով օծելով յանուն Յիսուսի։

Հ. Առանց իւղոյ էս կարելի՞ է կատարել այդ խորհուրդը։

Պ. Այո՛ կարելի է, ինչպէս կատարում է Հայոց եկեղեցին միայն քահանայի աղօթքով։

Հ. Ո՞րն է մեռասաներորդ մասը Հաւատամքի։

Պ. «Հաւատամք 'ի Յարութիւն մեռելոց, 'ի Դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից»։

Հ. Ի՞նչ ենք սովորում այս մասի մէջ։

Պ. Այս մասի մէջ սովորում ենք՝ թէ ամէն մեռած մարդոց մարմինները վերջին դատաստանի օրը իւրեանց հոգւոց հետ պիտի միանան և վեր կենան Աստուծոյ հրամանաւ, և դատին Քրիստոսից և ամէնքը իւրեանց վարձը ստանան։

Հ. Ո՞րն է երկոտասաներորդ մասը Հաւատամքի։

Պ. «Եւ 'ի կեանսն յաւիտենականս»։

Հ. Ի՞նչ է սովրեցնում այս մասը։

Պ. Այս մասը Հաւատամքի սովրեցնում է մեզ, թէ ամէն մարդկանց յարութիւնից և Քրիստոսի դատաստանից յետոյ՝ յաւիտենական կեանք պիտի լինի, ուր արդարները անվախճան երանութիւն կը ժառանգեն, և անզղջ մեղաւորները յաւիտենական տանջանքը։

Աղօթք.

Աղօթքն է խնդրուածք բարեաց յԱստուծոյ։

Աղօթքը բաժանւում է երկու՝ հրապարակական և առանձնական։

Հրապարակականն է, երբ որ շատ աղօթք անողների հետ միասին տաճարի մէջ հրապարակաւ կատարում ենք։

"Նորա տաճարի մէջ ամէնքը փառք տան նորան"։ Սաղ. 28. 9։ "Իմ աղօթքս կը մատուցանեմ Աստուծոյն նորա բոլոր ժողովուրդի առաջ Աստուծոյ տան դաւթի մէջ"։ 115. 18, 19։

Առանձնականն է որ մէնակ ենք կատարում։

"Մտիր քո սենեակը, և փակիր քո դռները և աղօթք արա՝ ծածուկ առ Հայրը"։ Մատթ. 6. 6։

Աղօթքների մէջ գլխաւորը Հայր մերն է, որն որ Քրիստոս Տէրն մեր սովրեցրուց։

Այս աղօթքի մէջ պարունակւում են եօթը խնդրուածք։

ա. "Հայր մեր որ յերկինս ես՝ սուրբ եղիցի անուն քո"։

Այս ասելով խնդրում ենք մեր երկնաւոր Հօրից, որ արժանացնի մեզ սուրբ առնել, այսինքն փառաւորել նորա սուրբ անունը, որդիաբար ծառայելով նորան։

բ. "Եկեսցէ արքայութիւն քո"։

Որ նա ինքը շնորհօք թագաւորի մեր սրտի մէջ, և մենք չծառայենք մեղքին և սատանային։

գ. "Եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի"։

Որ մենք նորա կամքը կատարենք այս աշխարհքումն այնպէս, ինչպէս երկնքումը կատարում են հրեշտակները։

դ. "Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր"։

Մեր ամէնօրեայ ապրուստը այսօր էլ տուր մեզ։

ե. "Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց"։

Ներիր մեզ մեր մեղքերը այնպէս, ինչպէս որ մենք էլ ներում ենք մեր մեղանչողներին։

զ. "Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն"։

Մի գցիր մեզ փորձանքի մէջ։

է. "Այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ"։

Ազատիր մեզ ամէն չար և մեղանչական գործքերից և սատանայի ձեռքից։

Զի քո՛ է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

Տասն պատուիրանք.

Նախ՝ "Ես եմ Տէր Աստուած քո. մի՛ ունիցիս քեզ զայլ Աստուած բաց յինէն"։

Աստուած այս առաջին պատուիրանքով հրամայում է մեզ, 1. որ ճանաչենք նորան, հաւատանք և անկեղծ սիրով սիրենք։ 2. փառաբանենք նորան, երկրպագութիւն տանք և ամենայն զօրութեամբ պաշտենք։ Եւ 3. բաց 'ի նորանից էլ ուրիշ Աստուած չ'ունենանք։

Երկրորդ՝ «Մի՛ արասցես դու քեզ զկուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս 'ի վերո, և որ ինչ յերկիր 'ի խոնարհ»:

Այս պատուիրանքով արգելում է մեզ Աստուած, որ կռոց երկրպագութիւն չընանք և կուռք չըպաշտենք: Կուռք նշանակում է քարից, փայտից, ոսկւոց կամ ուրիշ նիւթից շինած պատկեր, որին երկրպագութիւն են տալիս կռապաշտները ճշմարիտ Աստուծոյ տեղ:

Երրորդ՝ «Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո 'ի վերայ սնոտեաց»:

Սորանով պատուիրում է մեզ Աստուած. որ Աստուծոյ անունը ունայն բաների վերայ չը յիշենք և սուտ երդում չ'ուտենք:

Չորրորդ՝ «Յիշեա՛ սրբել զօր շաբաթուն՝ այսինքն զկիւրակէս»:

Այս պատուիրանքով հրամայում է մեզ Աստուած որ վեց օր մեր մարմնաւաւոր գործքերը կատարենք, իսկ եօթներորդ օրը Աստուծոյն ընծայենք, այսինքն սուրբ պահենք այն օրը աղօթքով և Աստուածպաշտութեամբ պարապելով և Աստուածահաճոյ գործքեր կատարելով. պատճառ որ վեց օրումը ստեղծեց Աստուած այս աշխարհքս, և եօթներորդ օրը դադարեցաւ գործից:

Շաբաթ բառը Հրէից բառ է և Հայերէն նշանակում է Հանգիստ: Քրիստոսից առաջ Աստուած հրամայեց Հրէից սուրբ պահել այս օրը: Առաքեալք 'ի պատիւ Քրիստոսի յարութեան՝ շաբաթ օրուայ սրբութիւնը Կիւրակի օր փոխեցին: Կիւրակէ նշանակում է Տէրունի՝ այսինքն Տիրոջ օր կամ Աստուծոյ օր:

Հինգերորդ՝ «Պատուեա՛ զհայր քո և զմայր քո, զի բարի լինիցի քեզ և երկայնակեաց լիցիս 'ի վերայ երկրի»:

Սորանով հրամայում է պատուել մեր ծնողացը և հնազանդ լինել նոցա. նմանապէս պատուել թագաւորին, մեր հոգևոր ծնողացը, բարերարներին, ծերերին, մեծաւորներին. և այլն:

Վեցերորդ՝ «Մի՛ սպանանե՛ր»:

Այս պատուիրանքը արգելում է մեզ՝ մեր կամքով մեր կամ ուրիշի մահուան պատճառ դառնալը, մինչև անգամ լեզուով ով և ինչ վիրաւորելը կամ ցաւեցնելը:

Եօթներորդ՝ «Մի՛ շնար»:

Այս պատուիրանքով հրամայում է մեզ Աստուած ամէն պիղծ գործքերից, շնութիւնից և ամէն անկարգ մարմնական ցանկութիւններից հեռու կենալ:

Ութերորդ՝ «Մի՛ գողանար»:

Սորանով արգելում է մեզ ուրիշի ապրանքը ուժով կամ խորամանկութեամբ սեփականել կամ խլել:

Իններորդ՝ «Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ»:

Այս պատուիրանքով հրամայում է մեզ Աստուած սուտ չխօսիլ և սուտ վկայութիւն չտալ և խաբեբայութիւն չանել:

Տասներորդ՝ «Մի՛ ցանկանար տան ընկերի քո և մի՛ ամենայնի, որք նորա կան»:

1005
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿՈՄԿԱՏ
*C.C.P.A Публичная Библиотека
7/XI. 1922
Ս. ՄՅԱՆԻՆՅԱՆ ԱՆՎԱՆ

Որանով արգելում է մեզ Աստուած, որ մեր ընկերոջ ունեցած բաներին աչք չդնենք և չցանկանանք, և ոչ ոքի համար չար բան մտքներիցս չանցկացնենք:

Այս տասը պատուիրանքը բովանդակում է իւր մէջ երկու գլխաւոր պարտաւորութիւն, այս է՝ Աստուած սիրել. և ընկեր սիրել իրրև իւր անձն:

Մ Ե Ղ Ք.

Մեղքն է պատուիրանազանցութիւն ընդդէմ Աստուծոյ հրամանին:

Մեղքը բաժանւում է երկու. Սկզբնական և Ներգործական:

Սկզբնականն է առաջին մարդոյ Ադամայ մեղքը, իսկ Ներգործականն՝ որ մենք մեզէն գործում ենք մեր կեանքի մէջ:

Ներգործական մեղքը բաժանւում է երկու. Մահուչափ և Թեթև:

Մահուչափ մեղքերն են այսոքիկ եօթն՝ Հպարտութիւն. Նախանձ. Բարկութիւն. Ծուլութիւն. Ագահութիւն. Որկրամոլութիւն. Բղջախոհութիւն:

Մահուչափ մեղաց դիմադրեալ առաքինութիւնքն են, Հպարտութեան դէմ՝ Խոնարհութիւն. Նախանձու դէմ՝ Եղբայրսիրութիւն. Բարկութեան դէմ՝ Հեզութիւն. Ծուլութեան դէմ՝ Արիութիւն. Ագահութեան դէմ՝ Ողորմածութիւն. Որկրամոլութեան դէմ՝ Ժուժկալութիւն. Բղջախոհութեան դէմ՝ Ողջախոհութիւն:

Թեթև կոչւում է այն մեղքը՝ որ մարդ անգիտութեամբ, տկարութեամբ կամ ակամայ է գործում:

Հայոց Սանդիսաց Եկեղեցւոյ ժամակարգութեանց ի նոյն խորհրդոց վերայ հարցասօր սեղեխութիւնք:

Եկեղեցին Քրիստոսի օրը եօթն անգամ աղօթք ունի սահմանած, ինչպէս Դաւիթ մարգարէն ասում է՝ «Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ». Սաղմ. ՃԺբ. 164:

Ա՛ուաջին՝ Գիշերային ժամերգութիւնը, որ սկսւում է՝ Տէր զի՞ բազմացեալ, և աւարտւում է մինչև 'ի Լոյսդ ա՛ստուածդ՝:

Գիշերային ժամու խորհուրդն այս է, որ Քրիստոս 'ի մէջ գիշերի ծնաւ՝ մեզ փրկելու. և 'ի մէջ գիշերի յարեաւ՝ մեզ յարութիւն տալու. և 'ի մէջ գիշերի պիտի գայ դատաստան անելու. ինչպէս սուրբ Աւետարանը ասում է. «'Ի մէջ գիշերի եղեւ բարբառ՝ ահա փեսայ գայ, ելէ՛ք ընդ առաջ նորա». Մատթ. իե. 6:

Ապա Քրիստոնէից պէտք է, որ այս գիշերային ժամերգութեան ժամանակը՝ իմաստուն կուսանաց պէս արթուն լինեն, հոգւոյ լապտերը վառ պահեն, որ յիմար կուսանաց պէս արքայութիւնից դուրս չմնան,

Երէկրորդ՝ Առաւօտեան ժամերգութիւնն, որ սկսւում է. «Լոյսդ ա՛ստուածդ ողորմութեամբ քոմ». և կատարւում է՝ մինչև «Եղիցի անուն Տեառն օրհնեալ»: Այս ժամերգութեան մէջ պարունակւում է այն խորհուրդը, որ առաւօտեան ժամն սկիզբն արաւ Աստուած այս աշխարհիս ստեղծմանը, ինչպէս ասում է Աստուածաշունչ գիրքը թէ՝ «Եղեալ երեկոյ և եղեալ վաղորդայն՝ օր մի». Ննդ. ա. 5: Եւ մեր փրկիչ Յիսուս Քրիստոս առաւօտեան ժամուն միշտ

գնում էր տաճարը. «Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առ նա 'ի տաճարն լսել 'ի նմանէ». Ղուկ. իա. 38:

Սորանից պարզ երևում է, որ ինքն Քրիստոս ամէն ժողովրդից առաջ գնում էր տաճարը: Նմանապէս և զատկի օրը առաւօտեան ժամուն երևեցաւ իւղաբեր կանանց:

Երրորդ՝ Արևադալի ժամերգութիւնն, որ սկսւում է՝ «Եղիցի անուն Տեառն օրհնեալ». և աւարտւում է մինչև ճաշու ժամն: Այս ժամուն պիտի իմանանք, թէ ինչպէս զգալի արեգակը իւր ճառագայթը այս աշխարհիս վերայ ծագում է, նմանապէս իմանալի Արեգակը, այսինքն Քրիստոս՝ իւր շնորհաց լոյսը մեր սրտի մէջ կը ծագի:

Չորրորդ՝ ճաշուն, որ է Երեք ողորմեայն: Առաջին ողորմեայն է երրորդ ժամու աղօթքը, պատճառ որ մեր նախամայրն Եւայ յերրորդ ժամուն խաբուեցաւ, և Աստուծոյ շնորհքից զրկուեցաւ. և Հոգին սուրբ երրորդ ժամուն իջաւ վերնատանը սուրբ առաքելոց վերայ և այն կորցրած շնորհքը նորմէկանց տուաւ: Երկրորդ ողորմեայն է վեցերորդ ժամու աղօթքը. պատճառ որ այս վեցերորդ ժամուն մեր Նախահայրը մեղանչեց և 'ինոյն ժամու Քրիստոս Տէրը մեր խաչի վերայ բեւեռեցաւ: Երրորդ ողորմեայն է իններորդ ժամու աղօթքը. պատճառ որ այս իններորդ ժամուն Քրիստոս խաչի վերայ քացախ և լեղի խմեց, և աջակողմեան աւազակին դրախտը տարաւ իւր հետ, և այն ժամուն իւր ամենասուրբ բանական Հոգին Հօր Աստուծոյ ձեռքը աւանդեց: Տէս Ներսէս Շնորհալւոյ «Այսոր անճառն մէջ»:

Հինգերորդ՝ Երեկոյեան ժամերգութիւնն, որ սկսւում է՝ «Խնարեցէք՝ Տէր զանէն ի»: և աւարտւում է մինչև «Տէր Աստուած փրկութեան իմոյ 'ի ամէն երեկոյի». և նշանակում է, որ Քրիստոսի մարմինը այս ժամուն խաչից ցած բերին:

Վեցերորդ՝ խաղաղականի ժամուն, որ սկսւում է՝ «Տէր Աստուած փրկութեան իմոյ 'ի ամէն երեկոյի». մինչև վերջը, և նշանակում է որ Քրիստոս Տէրն մեր այս ժամուն թաղուեցաւ գերեզմանի մէջ:

Եօթներորդ՝ հանգստեան ժամուն, որ է Եկեղեցեաց ամբողջ. և նշանակում է, որ Քրիստոս իւր ցաւութիւնից յետոյ՝ այս ժամուն վերնատան մէջ դուռը կողպած երևեցաւ Առաքելոց:

Սուրբ Պասարագի խորհրդոյ վերայ:

Սուրբ պատարագը Քրիստոսի չարչարանաց և մահուան յիշատակն է. բայց նորա մէջ նորա փրկագործ տընօրէնութեան ամէն գործքերը պարզ նկարագրւում են մեզ:

Սուրբ պատարագի խորհրդոյ մէջ երեք կերպ ընթերցմունք կայ. առաջինը՝ Մաղաքիա մարգարէի, երկրորդ՝ Թղթոց առաքելոց. երրորդ՝ Եւագ դպրոց: Դարձեալ սուրբ պատարագի խորհրդոյ մէջ երկու կերպ արարողութիւն կայ. մէկը՝ ծածուկ, միւսը՝ յայտնի:

Սուրբ եկեղեցին՝ երկնաւոր Թագաւորի պալատն է. սուրբ սեղանն՝ նորա աթոռը. և ժամարար քահանայն սարկաւագօք և դպրօք պիտի Աստուծոյ առաջ գայ պատարագ մատուցանելու: Վասնորոյ առաջ խորանն է մտնում քահանայն սարկաւագի հետ միասին և այնտեղ

զգեստաւորուած՝ դուրս են գալիս տաճան. բեմի առաջ քահանայն ձեռքերը լուանում է ասելով՝ «Լ՚ուայնց ՝ԷՐ-ԼԵՄՔ ՂՅԷ՚ՈՒ ԷՄ». որ օրինակ է ներքին մաքրութեան. ինչպէս մէկ էլ վերաբերումի վերջին՝ մատների ծայրերն է լուանում. և այս էլ օրինակ է որ հաղորդութեան մերձեցողը՝ ներելի մեղքից էլ պիտի մաքրուի:

Յետոյ սարկաւագն սկսում է խնկարկել և քահանայն սկսում է ասել, «Մ՚ՈՒՆՑ ՈՒՐԱԼԻ ՈՒԵՂԱՆՈՅ». գնում է բեմը և սեղանի առաջ կանգնում է: Մաղթանքը և քարոզը որ վերջացնում են, վարագուրը քաշում են. յետոյ քահանայն սպաս է դնում, այսինքն նուերը (ԸՆԾՈՅՆ, ՀԱՅ Ա ԳԻՆԷՆ) պատրաստում է, որ նշանակում է Բանին Աստուծոյ յղանալը յարգանդի կուսին Մարիամու. սորա համար քահանայն այնտեղ ամէն աղօթքից յետոյ՝ ասում է. «ՀՈՎԻՆ ՈՒՐԷ ԵՂԵՈՅԼ Ի ԽԵԼ» (երիցս): Յետոյ վարագուրի քաշելը, քահանայի ցած գալը բեմից և խնկարկելով ժողովրդեան մէջ շրջելը, և կրկին բեմը վերև գնալը, և սեղանի առաջ կանգնելը՝ նշանակում է Քրիստոսի Աստուծոյ մերոյ երկնքից աշխարհք գալը, և մարդոց հետ շրջելը, և ապա երկինք առ Հայր համբառնալը:

Ս՚ՈՒՐԲ ԱՍՈՒԱԾԸ՝ որ դպիրք երգում են, նշանակում է Սրովբէից երգը, որ աղաղակում էին առ Աստուած, Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց: Աւետարանը նշանակում է կայծակը, որ Սրովբէից մէկը ունէր ձեռքը (մաշայով) սեղանից առաւ և Եսայի Մարգարէի բերանին մօտեցրուց:

Մարգարէական և առաքելական գրեանց ընթերցումունքը նշանակում է, թէ Մարգարէից գուշակութիւնը և առաքելոց քարոզութիւնը ի միասին՝ Քրիստոսի տնօրէնութիւնն են ծանուցանում. վասնորոյ սորանից յետոյ կարդում են Քրիստոսի սուրբ տնօրէնութեան գիրքը, որ է սուրբ Աւետարանը: Յետոյ երկու ափներս մեկմեկու մօտ բերելով՝ Հաւատամք ենք ասում, որ նշանակում է թէ ներքին հինգ զգայարաններս աշխարհական զբաղմունքից, և արտաքին զգայարաններս մարմնական գործքերից յետ քաշելով, քրիստոնէական սուրբ հաւատոյ դաւանութիւն ենք տալիս, ինչպէս որ սովորեցանք Մարգարէական Առաքելական և Աւետարանական սուրբ գրքերից:

Սորանից յետոյ ժամարարը մերկանում է, այսինքն հանում է սաղաւարտը և հողաթափը միայն. եթէ Եպիսկոպոս է՝ թագը, եմիփորոնը և հողաթափը. պատճառ որ մինչև հիմայ ժամարարը Քրիստոսի օրինակ էր, բայց սորանից յետոյ այն սարսափելի սուրբ խորհրդոյ սպասաւոր է լինում և կատարող նոյն խորհրդոյ:

Վերաբերումն նշանակում է սուրբ Յովսէփայ Աստուածահօր և սուրբ Կուսի Նազարեթից դուրս գալը և Բեթղեհէմ գնալը:

Ժամարարի կիսով չափ սկիհի ծածկոց բանալը, և յետ քաշելը, նշանակում է Քրիստոսի կուսական ամենասուրբ ծնունդը: Վարդապետաց կամ քահանայից պաշտօնեայներով առեան առաջ գալը ողջոյն առնելու, նշանակում է հովուաց մինչև Բեթղեհէմ գնալը ասելով՝ «ԵԿԷ՚Յ ԵՐԼԻՆՑՈՒ ՄԻՆՉԵ ՅԲԵԼԵՂԵՀԷՄ, Ե ՊԵՏՅՈ՚Ւ ԸՆ՚ԷՆ Է ԲԱՆԸ ՈՅՆ ՈՐ ԵՂԵ»: Բուրվառ ունող սարկաւագի ցած

դալը և քահանային ողջոյն տալը՝ նշանակում է հրեշտակի աւետիս տալը հովուաց՝ «Ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ»: Այն ժամանակը սարկաւագը ժողովրդեան զգուշացնում է ասելով՝ ՂՈՐՈՆՈ, ՂՈՐՈՆՈ. . . և այլն: Իսկ թէ ինչի՞ համար է այնքան զգուշութիւնը, այն պատճառ որ Քրիստոսի յայտնութեամբը այս երկիրս երկինք եղաւ, և մարդիկ հրեշտակացան, վասն որոյ հրեշտակաց պէս՝ Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէր՝ զօրութեանց, երգում են դպիրները: Այն ժամանակը ժամարարը կատարում է այն ահաւոր խորհուրդը, որ Քրիստոս վերնատան մէջ սահմանեց, և մինչև հոգի Աստուծոյ երգելը կատարւում է: Եւ երբ Քրիստոսի յիշատակը կատարւում է՝ յետոյ յիշում են Աստուածածինը և Սուրբերը, պատճառ որ յիշատակելով Քրիստոսին և ամենայն սրբոց՝ խնդրում է քահանայն երկնաւոր հօրից հաշտութիւն և ողորմութիւն ամենեցուն՝ կենդանեաց և ննջեցելոց: Սորա համար երբ յիշատակութիւնները վերջանում է, երգում են համարձակաձայն բարբառով Տէրունական աղօթքը «Հայր մեր»: Ապա սեղանի աջ կողմը գալով սարկաւագները վկայեալ Սրբոց յիշատակում են ասելով՝ «Ա՛ստուածոյ սրբոց, Մարգարէից»: Յետոյ ձախ կողմը կրկին դառնալով՝ «Գոհութիւն ի քահանայութիւն» ասելով՝ յիշատակում են կենդանիքը, որոց սուրբ լինելը դեռ չէ յայտնի և չէ որոշած:

Սարկաւագը բարձր ձայնով ասում է՝ Պատարագեցէք, այսինքն ուղիղ դիտաւորութեամբ մտիկ արէք, պատճառ որ ահա Քրիստոս մեր փրկութեան համար իւր ամէն տնօրէնութիւնը կատարեց, և երկինքը համբարձաւ. այս

նշանակելու համար ժամարարը գլխից վեր բարձրացնում է սուրբ խորհուրդը ասելով՝ «Ի՛ սրբութիւն սրբոց». կամի ասել թէ այս սրբութիւն է, բայց ամենին չէ՛, այլ միայն սրբոց: Ժամարարի այս խօսքը լսելով դպիրները աղաղակում են՝ «Մի՛այն սո՛ւրբ, մի՛այն Տէր Յիսո՛ւս Քրիստո՛ս». և մենք նորանով արժանի ենք լինում օրհնել ամենասուրբ Երրորդութիւնը. սորա համար էլ դպիրները երգում են «Հայր սո՛ւրբ, Որդեա՛ սո՛ւրբ, Հոգեա՛ սո՛ւրբ»:

Վերջը ժամարարը մարմինը և արիւնը Քրիստոսի սկիհով առնում է ձեռքը և դառնալով դէպ ի ժողովուրդը ասում է՝ «Ի՛ սո՛ւրբ, Ի՛ սո՛ւրբ պատուական մարմնոյ և յարենէ Տեառն մերոյ». և այլն:

Յետոյ արժանաւորները հաղորդւում են, և անպատրաստները սուրբ սեղանի փշրանքն (մասը, նշխարք) են ճաշակում, որով մասնակից են լինում հաղորդողներուն և միաբան աղաղակում են՝ «Լցա՛ Ի՛ Քաջութեանց քոց Տէր». և այլն:

Այս ամէն խորհրդական արարողութեանց վերջը՝ ժամարարը կրկին սաղաւարտը դնում է գլխին և հողաթափները հագնում է և բեմից ցած է գալիս. բայց ցած գալուց առաջ ասում է «Ոչ օրհնեա՛ պանոսիչ»: Ժամարարի կրկին ցած գալը նշանակում է Քրիստոսի միւսանգամ գալուստը Ի դատաստան:

Սուրբ Եկեղեցոյ, Տաճարի, Անօթների և Զգեստների վերայ կարճաւոր ծանօթութիւն:

Բառս Եկեղեցի՝ Յունարէն Էքլէզիա՝ նշանակում է Քրիստոսի հաւատացելոց ժողովը, կամ Քրիստոսի ժողովուրդը:

Եկեղեցին բաժանւում է Զինուորեալ և Յաղթական: Զինուորեալ Եկեղեցին նշանակում է հաւատացելոց ժողովը, որ դեռ ևս կենդանի լինելով, իբր Քրիստոսի զինուոր, հոգևոր զէնքով կռւում են իւրեանց հոգւոյ թշնամւոյ հետ:

Յաղթականը նշանակում է ննջեցելոց սրբոց ժողովը, որ բարի պատերազմը (կռիւ) կատարելուց յետոյ՝ յաղթեցին հոգւոյ թշնամւոյն և յաւիտենական փառաց յուսովը փոխուեցան այս աշխարհքից:

Տաճարն է աղօթատեղի (աղօթատուն, տուն Աստուծոյ) կամ շինուածք՝ օրհնած և սուրբ մեռոնով օծած Եպիսկոպոսից, տէրունական պատկերներով և ուրիշ մաքուր զարդերով զարդարած, ուր կատարում են սուրբ եկեղեցւոյ խորհուրդները և միւս սրբազնագործութիւնները, և ուր Քրիստոնեայք հրապարակաւ աղօթք են մատուցանում առ Աստուած:

Ծանօթ. Բառս եկեղեցի անյատուկ նշանակութեամբ երբեմն ևս նշանակում է տեղին կամ շինուածը (Տաճար), ուր հաւաքւում են Քրիստոնեայք իւրեանց Աստուածպաշտութիւնը կատարելու:

Ծանօթ. Առաջին աղօթատեղին կամ Տաճարն էր այն մեծ և զարդարած վերնատունը, ուր Քրիստոս ինքն իւր աշակերտաց հետ ընթրիքը կատարեց: Այս օրինակի հիմնադրուեցան աղօթատեղիք Քրիստոնէից ամէն տեղ միանգամայն, որ քաղաքներումը որ քարոզում էին առաքեալք:

Ինչպէս փոքր Հայաստան մեր Հայոց Արգար Թագաւորի ժամանակը Թադէոս առաքեալը Եդեսիա քաղաքումը քարոզելով քրիստոնէական հաւատը՝ շինեց շատ աղօթատեղիք: Նոյնպէս Բարթուղիմէոս առաքեալը Որթվատ և Վանանդ մեծ Հայաստանի Անձևացեաց երկրումը շինեց տաճար սուրբ Աստուածածնայ անուամբ:

Իսկ չորրորդ դարու սկզբին՝ 303 թուին մեր Տրդատ Թագաւորի ժամանակը սուրբ Գրիգոր լուսաւորիչը, երբոր ընդհանրապէս տարածեց Քրիստոնէութիւնը՝ շինեց երևելի տաճար սուրբ Էջմիածնայ անուամբ. և յետոյ ամէն տեղ շինուեցան ուրիշ շատ տաճարներ բոլոր Հայաստանի երկիրներումը:

Ծանօթ. Էջմիածնից առաջ սուրբ Գրիգոր լուսաւորիչը, երբոր Կեսարիից ձեռնադրուած յետ էր գալիս Հայաստան, առաջին անգամ Տարօնումը շինեց վանք և փոքրիկ աղօթատեղի:

Տաճարը բաժանւում է երեք մասը. 1) Գաւիթ. 2) յատկապէս Տաճար կամ Ատեան. 3) Բեմ:

Գաւիթը տաճարի առաջին մասն է, որ տեղ որ հին ժամանակը հաւաքւում էին նորընծայք, ապաշխարողները և պատրաստուածները մկրտելու համար: Այս մասը տաճարի կոչւում էր ևս Տրապիզ, այն պատճառաւ որ առաջին դարու քրիստոնեայք իւրեանց Աստուածպաշտու-

թիւնը կատարելուց յետոյ՝ հասարակաց սեղան էին դնում և կերակրւում էին այն սեղանից, որ կոչւում էր Ագապ (սէր)։

Յատկապէս տաճար կամ ատեան կոչւում է երկրորդ մասը տաճարի, որ է բեմի և դաւթի մէջ տեղը, որ տեղ որ ինչպէս հին ժամանակը, նմանապէս և այժմ հաւատացեալք կատարում են իւրեանց Աստուածպաշտութիւնը։

Բեմն է տաճարի երրորդ մասը՝ երեք կամ աւելի աստիճաններով ատենից բարձր, և վարագուրով բաժնած, ուր վեր են լինում միայն աստիճանաւոր եկեղեցականք։ Բեմի աջ ու ձախ կողմերից կան խորաններ կամ աւանդատունք, որ տեղ որ պահւում են տաճարի սպասները, բոլոր անօթները և հանդերձները։

Բեմի վերայ մէջ տեղը շինած է սեղան, հաստատած մէկ քարէ սիւնի վերայ, որոյ մէջ Եպիսկոպոսը դնում է քար (վէմ քար) վրէն խաչեր փորագրած, մեռոնով օծած, ծածկոցով և գոգնոցով զարդարած, որոյ վերայ կատարում է Յիսուսի Քրիստոսի կենարար մարմնոյ և արեան խորհուրդը։

Սեղանի վերայ դրած են Աւետարանը, կենարար խաչը, Մանատուփը և Քրիստոսի խաչելութեան կամ ուրիշ տէրունական պատկերներ։ Սեղանի յետնէն հիւսիսոյ կողմը որմի (պատի) մէջ շինած է ընծայարանը։

Աւետարան բառը նշանակում է այն գիրքը, որոյ մէջ պարունակւում են ուրախարար համբաւներ, այսինքն Քրիստոսի աւետաւոր խօսքերը և վարդապետութիւնքը՝ ուած մեզ մեր հոգւոյ փրկութեան և յաւիտենական

կենաց համար, որն որ սեղանի վերայ դրած՝ նշանակում է նոյն ինքն Յիսուս Քրիստոս բաղմած այնտեղ։

Խաչը առաջ պատուհասի քառաթև փայտն էր. վերջը այն պատուհասի գործիքը մարդկային ազգի փրկութեան միջոց դարձաւ, պատճառ որ՝ Յիսուս Քրիստոս իւր անձն նորա վերայ պատարագ բերելով՝ ազատեց մարդկային ազգը մեղքից, որով ինքն փառաւորւեցաւ, և այս սուրբ նշանը պարծանք թողաւ Քրիստոնէից համար։ Խաչը պէտք է բաղմած լինի սեղանի վերայ, այն պատճառաւ որ այնտեղ է կատարւում նոյն իսկ խորհրդական պատարագը։

Մանատուփն է փոքրիկ տուփ, (զուրթի) որոյ մէջ առաջուց սրբագործած Յիսուսի Քրիստոսի մարմնոյ և արեան մասն են պահում հիւանդաց և բանտարկեալց հաղորդելու համար։

Վեմն է մարմարէ քառակուսի քար (որ Յիսուսի Քրիստոսի գերեզմանի մէջ թաղման խորհուրդն ունի)։ Մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ առանց վիմաքարի կարելի չէ կատարել սուրբ պատարագի խորհուրդը։ Ընծայարանն է տեղի, ուր պատրաստւում է նուէրը (հացը և գինին) անարիւն պատարագ մատուցանելու համար։

Ծանօթ. Սուրբ անօթները, սպասները և զգեստները մտած են եկեղեցւոյ մէջ ոմանք առաքելոց ժամանակը. և ոմանք էլ նոցա յաջորդաց և միւս առաջնորդաց ժամանակը. եկեղեցեաց բարեզարդութեան և պայծառութեան համար։

Անօթներ:

Մաղմայն է արծաթեայ ոսկեզօծ փոքրիկ պնակ (թեփշի):

Սկիհը նմանապէս արծաթեայ ոսկեզօծ բաժակաման է, և երկուսն էլ սահմանուած են առաքելոց ժամանակը. Մաղմայն՝ նշխարքը (հացը) դնելու համար. Սկիհը՝ (բաժակ) գինին ածելու համար:

Քօղը բարակ ծածկոց է, որով ծածկում են նուէրը (հացը և գինին):

Քշոցներն են արծաթեայ բոլորակ և բոժոժազարդ ճօճանակները, երկու երեսից էլ ունին ոսկէ կամ արծաթէ ոսկեզօծ ձուլածու կամ քանդակեալ Սրովբէից և Քրովբէից պատկերներ, որն որ սարկաւագները պատարագի ժամանակը ձեռքին ունին և շարժում են:

Քշոցները օրինակ են վեցթևեան Սրովբէից և Քրովբէից, որ նոցանով աչքներիս առաջ ունենանք այն անեւևոյթ ոգւոց ներկայ լինելը:

Բուրվառը խնկարկութեան անօթ (ման) է, որով խունկ են ծխում Տէրունական և սրբոց պատկերաց և ժողովրդոց առաջ:

Մոմեր վառելը սահմանուեցաւ հին ժամանակաւանից, պատճառ որ առաջին երեք դարերումը հարկաւոր էին Քրիստոնէից, որոնք հալածողների ձեռքից թաղ կացած էին գետնափորների մէջ և լեռների ծակերումը, և կամ գիշերները մօտ էին լինում միասին աղօթք անելու: Բայց երբոր Քրիստոսի եկեղեցին ազատուեցաւ հալածանքից և խաղաղութեան մէջ մնաց՝ մոմեր վառելը եկեղեցւոյ մէջ մնաց ցերեկով ևս, հետևելով հին օրի-

նաց, պատճառ որ Իսրայելացւոց մէջ հին կտակարանի առաջ միշտ վառած էր ջահը, այս մաքով թէ՝ Աստուծոյ օրէնքները լոյս են, և լոյս են տալիս մարդոյ շաւղաց (ճամբին): Բաց 'ի սրանից իւղի և մոմեղինաց վառելը տիպ և նշանակ է հոգւոյ, որ վառուած է սիրով առ Աստուած:

Եկեղեցական հանդերձներ կամ զգեստներ:

Եկեղեցւոյ մէջ սուրբ պատարագի ժամանակը գործ դրած հանդերձները կամ զգեստները սոքա են՝ շապիկ, ուրար. փորուրար, բազպան, գօտի, կոնքեռն, վակաս, շուրջառ, սաղաւարտ, թագ, եմիփորոն և գաւազան: Այս զգեստներից սարկաւագը միայն կարող է զգենուլ՝ շապիկ և ուրար. քահանայն՝ շապիկ, փորուրար, գօտի, բազպան, վակաս, շուրջառ և սաղավարտ: Եպիսկոպոսն բաց 'ի սոցանից գործ է դնում եմիփորոն, կոնքեռն, թագ և գաւազան: Ժամարարի շապիկը պիտի լինի գունով ըստ պիտակ:

Շապիկը նշանակում է 1) այն սպիտակ հանդերձը հրեշտակի, որ նստած էր Քրիստոսի գերեզմանի վերայ: 2) Այն սպիտակ հանդերձն ևս որ Հերովդէս ծածկեց Յիսուսի վերայ: 3) Սրբազան կարգի սրբութիւնը և անարատութիւնը:

Բազպանը նշանակում է այն կապանքը, որով կապուեցան մեր Փրկչի ամենամաքուր ձեռքերը, երբոր տանում էին նորան Պիղատոսի մօտ:

Սարկաւագի ուրարը առաջ մէկ երկար կտաւէ զարդ էր, որ հին ժամանակը սարկաւագները գնում

էին ուսի վերայ նորանով սրբելու հաղորդուողների շրբ-
թունքը:

Ծանօթ. Սուրբ Եկեղեցւոյ վարդապետները ուրարը նմանեցնում են հրեշտակի թևերին, պատճառ որ սարկաւագի կարգը ցոյց է տալիս հրեշտակի պաշտօնը: Այլ և նշանակում է Քրիստոսի օրինաց լուծը: Սարկաւագը որ միայն ձախ ուսին է դնում, ցոյց է տալիս դեռ կարողութիւն չունենալը բոլորովին Քրիստոսի օրինաց լուծը բառնալու: Եւ կիսասարկաւագը՝ որ ձախ բազկի վերայ է կրում ուրարը՝ նշանակում է որպէս թէ նա ինքն զինքն անկար ճանաչելով Աստուծոյ օրինաց լուծը բառնալու, փոքր ինչ կարաց մօտենալ Աստուծոյ պատուիրանաց գործքերին:

Փորուրարն է քահանայի ուրարը, որ ձգում է պարանոցի վերայ կախ, և նշանակում է Քրիստոսի աւետարանի քաղցր լուծը, որ կրում է իւր լանջերով:

Գօտին նշանակում է պատրաստութիւնը, զօրութիւնը և արիութիւնը քահանայական պաշտօնը կատարելու:

Կոնքեռն է խաչաձև զարդ գօտկից կախ արած աղդեր վերայ, և ունի հոգևոր զէնքի (սրոյ՝ այսինքն Աստուծոյ բանին) նշանակութիւն, որով քահանայապետն պիտի զինուորի անհաւատից և հերձուածողաց դէմ, և տրւում է միայն արք Եպիսկոպոսաց:

Կոնքեռն դարձեալ նշանակում է Աւետարանական Մախաղը:

Շուրջառը նշանակում է անկար քղամիդը, որ հագած ունէր Քրիստոս:

Վակասը ուսերքի զարդ է 'ի հին օրինաց առած, որ քահանայապետը հագնում էր՝ Եփուդ կամ Վակաստասն երկու ակներով զարդարած և փորագրած նոցա վերայ Իսրայելացւոց տասներկու ցեղի անունները, և կարդուած էր լինում բոլոր ժողովրդեան միջնորդ և բարեխօս: Իսկ նոր օրինաց վակասի վերայ փոխանակ տասներկու քարանց՝ նկարած է խաչեր քրիստոնէութեան նշանակ: Վակասը դարձեալ նմանեցնում են մոլորեալ ոչխարին, այսինքն մարդկան մոլորեալ ազգին:

Սաղաւարտ (խոյր կամ եպիսկոպոսական թագ) որ հին օրինաց քահանայապետը դնում էր գլխին: Ըստ նոր օրինաց նշանակում է փշեայ պսակը և վարշամակը, որով փաթթած էր Փրկչի վերաւորուած գլուխը:

Իսկ երկփեղկեան (երկձեղ) թագը, որ կրում է Եպիսկոպոսը՝ նշանակում է երկուց Կտակարանաց գիտութիւնը:

Հայաստանեայց Եկեղեցւոյ Ծանօթութիւնք:

Տօնախմբութիւնքն են սուրբ հանդէսներ և հոգևոր ուրախութիւնք, որ հաւատացելոց ժողովը համախմբած եկեղեցւոյ մէջ հրապարակաւ կատարում է 'ի փառս Աստուծոյ և 'ի պատիւ նորա սրբոց. ինչպէս սահմանել են Առաքեալք և Հայրապետք:

Ամենայն քրիստոնեայք այսպիսի տէրունական տօները համարեա թէ միակերպ են կատարում, պատճառ որ սովրել են Քրիստոսի առաքեալներից և նոցա յաջորդաց — հայրապետներից. բայց այս տօները իւրաքանչիւր

քրիստոնէից մէջ կատարուում են զանազան արարողութեամբ և ծէսերով:

Տօնախմբութիւնները բաժանուում են երկու. Առաքելադիր և Հայրապետադիր:

Առաքելադիր տօնախմբութիւններն են Ծննդեան, Աստուածայայտնութեան, Մկրտութեան, Համբարձման, Հոգեգալստեան և միւս բոլոր նախագուշակ Քրիստոսի տնօրէնութեանց հրաշափառ տօները. որն որ Առաքեալք սահմանեցին, Քրիստոսից սովրեցան և սովրեցրին եկեղեցւոյ, որ ամէն տարի բոլոր Քրիստոնեայք հոչակելով փառաւորեն զԱստուած, ինչպէս մեր սուրբ հարք ասում են Շարականի մէջ. "Եւ աշակերտեալք 'ի սրբոյ առաքելոյ՝ ուստք փառաւորել զքեզ 'ի տաճարի սրբութեան քո":

Հայրապետադիր տօներն են Տեառնընդառաջի կամ Քրիստոսի քառասնօրեայ գալստեան 'ի տաճարն, Վարդավառի կամ Քրիստոսի Պայծառակերպութեան, Աստուածածնայ Վերափոխման, Գիւտ խաչի, Երևման խաչի, Խաչվերացման, Վարագայ խաչի, և ուրիշ տօներ Աստուածածնայ, Յովհաննու Մկրտչի, Առաքելոց, Մարգարէոսաց և այլ ամենայն սրբոց,

Տէրունական կոչուում են տօնախմբութիւնները, որոնք կըվերաբերին մեր Տէր Յիսուսի Քրիստոսի, զորօրինակ. Աւետման, Ծննդեան, Աստուածայայտնութեան, Մկրտութեան, քառասնօրեայ Ընծայման 'ի Տաճարն, Նորա Գալստեան Երուսաղէմ ծաղկազարդին, Համբարձման և այլ տնօրինական տօները:

Տաղաւարները Տէրունական տօնախմբութիւններն են, և համարուում են հինգ, որոնք մեր Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ կարգած են երևելի տէրունական տօներին. այսինքն՝ Ծննդեան, Զատկի, Վարդավառի, Վերափոխման Աստուածածնայ և Խաչվերացման: Բայց Ծննդեանը և Զատկին մեզանումը աւելի հանդէսով են տօնուում, պատճառ որ փրկագործութեան և քաւութեան տօներ են. այս պատճառաւ էլ այն տօների առաջիկայ օրերը ճրագալոյց են անում, և մեր եկեղեցւոյ վարդապետները Ծննդեան և Յարութեան ճրագալուցի դիշերը կարգել են պատարագ մատուցանել:

Տաղաւար ասում են այն տօները, որն որ հրէայք տարին միանգամ մեծ հանդէսով կատարում էին, որ կոչում էր Տաղաւարահարաց տօն. և թշրին Հոկտեմբամին գնում էին Երուսաղէմ, ուր ժողովում էին հրապարակներում, պարտէզներում և կտուրների վերայ, և տաղաւարներ էին խփում կամ մանր շարժական խուցեր էին շինում և եղեգներով (ղամիշով) և ոստերով (ծառի ճիւղերով) զարդարում էին և բնակուում նոցա մէջ եօթն օր, իւրեանց քառասնամեայ պանդխտութեան յիշատակի համար անապատումը. և եօթներորդ օրը մեծ հանդէսով ոստերը ձեռին բռնած եօթն անգամ զՍիոն (մատաղն) բոլորը պտուտ էին գալիս, և այնպէս կատարում էին իւրեանց ազատութեան յիշատակը: Նոր օրէնքումը խափանուեցան նոքա, և փոխանակ նոցա կարգուեցան հինգ երևելի տէրունական տօները. պահելով առաջին անունը

Տաղաւար կամ Տաղաւարահարաց տօն։ Տաղաւար նշանակում է վրան (չատիր)։

Առաջին Տաղաւար կամ Նաւակատիքն է Յիսուսի Քրիստոսի Ծննդեան տօնը, որ մեր փրկութեան համար մարդկային բնութիւն առաւ, Աստուածը մարդացաւ, որ մարդկանց մեղքերը բառնայ, համբերեց չարչարանաց և մահուան մեղ համար, որ մեզ յաւիտենական երանութեանը արժանացնի. վասնորոյ և կատարւում է մեզանում Ծննդեան, Աստուածայայտնութեան և Մկրտութեան տօնը Յունվարի 6 ին։

Իսկ միւս տնօրենքներն են Նորա Թլփատութեան և Անուանակոչութեան տօնը ութերորդ օրը Ծննդեան յետոյ, ինչպէս որ կոչուեցաւ հրեշտակից Մարիամ կուսին աւետելու ժամանակը։

Տեառնընդառաջին է Քրիստոսի քառասնօրեայ տաճար գալու տօնախմբութիւնը, ուր Սիմէոնն Ծերունին իւր գիրկն առաւ և օրհնեց զԱստուած։ Այս տօնը մեր եկեղեցին կատարում է Փետրուարի 14 ին։

Աւետմանն է Աստուծոյ բանին անճառելի մարդեղութեան տօնախմբութիւնը, որն որ Գաբրիէլ հրեշտակապետը աւետիս տուաւ Մարիամ սուրբ կուսին, թէ Բանն Աստուած Հոգւով սրբով կը յղանայ Նորա յարգանդումը. և կծնուի Փրկիչ աշխարհի։ Այս տօնը մեր Հայաստանեայց եկեղեցին կատարում է Ապրիլի 7 ին։

Ծաղկազարդին է Յիսուսի Քրիստոսի Երուսաղէմ մտնելու տօնախմբութիւնը։

Քառասնորդաց վերջին եօթնեակը (շաբաթ) կոչւում է աւագ կամ չարչարանաց շաբաթ, պատճառն որ Երկուշաբաթի օրը՝ մեր եկեղեցին Արարչութեան և Ադամայ Դրախտից դուրս գալու յիշատակն է կատարում։ Երեքշաբաթի՝ համաշխարհական ջրհեղեղի և տասն կուսանաց։ Չորեքշաբաթի՝ Յիսուսի Քրիստոսի մատնութեանը։ Հինգշաբաթի՝ աշակերտաց ոտները լուաց Քրիստոս, և նոյն օրը երեկոյին զատկական գառը կերաւ իւր աշակերտաց հետ, և հաստատեց սուրբ պատարագի խորհուրդը. և մի և նոյն գիշերը չարչարուեցաւ։ Աւագ ուրբաթ օրը խաչուեցաւ և մեռաւ. և նոյն երեկոյին թաղուեցաւ։ Աւագ շաբաթ օրը՝ մնաց գերեզմանի մէջ մինչև կէս գիշերը կիւրակէի։

Երկրորդ Տաղաւարն է Զատկի կամ Յիսուսի Քրիստոսի Յարութեան տօնը. որ երրորդ օրը թաղման յետոյ. յարութիւն առաւ մեռելներից. և առաջին անգամ աւետիս տուաւ հրեշտակը իւղաբեր կանանց, և յետոյ երևեցաւ նոցա և իւր մօր Մարիամին և իւր աշակերտաց շատ անգամ քառասուն օրուան մէջ։

Համբարձմանն է Քրիստոսի քառասներորդ օրը երկինք համբառնալու տօնախմբութիւնը. որ տարաւ իւր աշակերտաց Զիթենեաց լեռն Բեթանիայում, ձեռքը դրեց նոցա վերայ և հրամայեց սպասել վերնատանը Հոգւոյն սրբոյ գալստեանը, և ինքն նոցա առաջ սկսաւ բարձրանալ երկինքը, և ամպը ծածկեց նորան նոցա տեսութիւնից, և յետոյ աշակերտները յետ դար-

ձան Երուսաղեմ և միաբան աղօթք էին անում և ըս-
պասում էին Քրիստոսի խոստմանը:

Առաջին կիւրակէն Համբարձման յետոյ որ մեր
Եկեղեցին կոչում է երկրորդ Ծաղկազարդ՝ Համբարձման
չորրորդ օրուան տօնախմբութիւնն է, և աւանդութիւն
կայ մեր ազգի մէջ, թէ սուրբ Լուսաւորչի պահպան
հրեշտակը չորրորդ դասակարգից էր, և Համբարձման տօ-
նախմբութեան պատճառը յայտնում է նորան, ինչպէս եր-
գում են մեր Շարականումը. "Մեծահրաշ այս խորհուրդ
աւանդութեամբ առ մեզ հասեալ, զոր հոգւոց լուսա-
տուն 'ի պաշտպանէն իւրմէ լուեալ, եթէ տօն մեծ է
այսօր իմոյ դասուն, որ 'ի յերկինս":

Հոգեգալստեանն է Հոգւոյն սրբոյ իջման տօնա-
խմբութիւնը, որ կոչւում է Պենտեկոստէ՝ այսինքն յիսնե-
րորդ օր, պատճառն որ զատկից եօթը շաբաթ յետոյ՝
հրէայք տօնում էին օրինաց յիշատակը, որ առան Սի-
նայ լերան վերայ, որ Հոգեգալստեան օրինակ էր: —

Հոգւոյն սրբոյ գալուստը կատարեցաւ յիսներորդ
օրը զատկից յետոյ, երբոր առաքեալք և աշակերտք
միասին աղօթք էին անում Վերնատան մէջ՝ երեք
ժամուն սաստիկ քամու ձայն եղաւ և երևեցան ամէնքի
վերայ հրեղէն լեզուք, որոնք շնորհաց նշան էին, և
որով առաքեալք սկսան խօսիլ զանազան լեզու և
մարգարէանալ. նաև նոյն օրը հրաշագործութեամբ շա-
տերին դարձրին դէպ ի քրիստոնէական հաւատը:

Երրորդ Տաղաւարն է Վարդավառի կամ Քրիստո-
սի Պայծառակերպութեան տօնը, որ մեր եկեղեցին մեծ
հանդէսով է կատարում, ինչպէս սուրբ Լուսաւորիչը
սահմանադրել է, պատճառն որ կռապաշտութեան ժա-
մանակը մեծ տօն էր կատարւում Հայաստանի մէջ 'ի պա-
տիւ անահտական կռոց. իսկ Գրիգոր լուսաւորիչը այն
տօնը վերցրուց և կարգեց Քրիստոսի Պայծառակերպութեան
տօնը, և որովհետև վարդով զարդարում էին քաղաքները
և կռատները, այս պատճառաւ այն կուռքը կոչւում էր
Վարդան, վասնորոյ այն տօնախմբութիւնն էլ կոչեցաւ
Վարդավառ:

Պայծառակերպութեանն՝ կոչւում է այն տօնը, որ
Քրիստոս կամեցաւ իւր չարչարանքից առաջ ցոյց տալ
առաքելոց իւր Աստուածութեան փառքը, վասնորոյ
առաւ Պետրոսին, Յակոբոսին և Յովհաննէսին իւր հետ, և
երբ թաբոր լերան վերայ բարձրացաւ (վերելաւ), այն տեղ
նորա դէմքը լուսաւորուեցան արեգակի պէս, շորերը
սպիտակ եղան ձիւնի պէս, և երևեցան մարգարէք Մով-
սէս և Եղիա. և այն ժամանակը ամպը նոցա վերայ հո-
վանի եղաւ և լսուեցաւ երկնքից ձայն, թէ "Դա է որ-
դի իմ սիրելի. զորան լսեցէք":

Զորրորդ Տաղաւարն է սուրբ Աստուածածնայ Վերա-
փոխման տօնախմբութիւնը, որ միշտ տօնում ենք Կիւ-
րակէ օր, և այս տօնախմբութիւնը մեր եկեղեցին կա-
տարում է ինն օր:

Ծանօթ. Առհասարակ ամենայն եկեղեցիք քրիստո-
նէից Աստուածածնայ չորս տօնախմբութիւնեն կատարում,

այս է՝ Յղութեան Աստուածածնայ Աննայից, որ տօնում ենք միշտ Դեկտեմբերի 9 ին. Նորա Ծննդեանը՝ 8 ին Սեպտեմբերի. Երից ամոց ընծայման 'ի տաճարն՝ 21 ին Նոյեմբերի. և Վերափոխմանը՝ որ շարժական տօն լինելու համար կատարւում է Օգոստոս ամսի երբեմն 13 ին — 14 15 — և 16. և ինչպէս վերը ասացինք միշտ կիւրակէ օրն է ընկնում,

Հինգերորդ Տաղաւարն է սուրբ Խաչի տօնախմբութիւնը, որ մեր եկեղեցին տարին չորս անգամ է տօնում, այսինքն է՝ Գիւտ Խաչին, Երևման Խաչի, Վերացման և Վարագայ Խաչի: Գիւտ Խաչի տօնն է, որ Կոստանդիանոս Թագաւորի մայրը՝ Հեղինէ Թագուհին գնացել էր Երուսաղէմ 327 թուին ուխտ և երկրպագութիւն անօրինական տեղեաց, ուր հետաքննութեամբ և մեծ ծախսով գտաւ և բաց անել տուաւ անթաղչելի դանձը, որ հրեայք թաղ էին կայրել. և բաղմեցրուց իւր շինած մատուռի մէջ. վասնորոյ 'ի պատիւ և 'ի փառաբանութիւն սուրբ Խաչի՝ եկեղեցին կարգեց Գիւտ Խաչի տօնախմբութիւնը:

Երևման Խաչի տօնախմբութիւնն է այն, որ Խաչ գիւտից յետոյ իբր 362 թուին, ինչպէս պատմում է Կիւրեղ Երուսաղեմացին՝ երկնքումը երևեցաւ Խաչաձև լոյս և այս տեսիլքի վերայ դուրս եկան բոլոր քրիստոնեայք և երկրպագութիւն տուին և փառաւորեցին Քրիստոսի սուրբ Խաչը, այս պատճառաւ սահմանուեցաւ Երևման Խաչի տօնը:

Վերացման Խաչի տօնախմբութիւնն է այն, որ Պարսից Թագաւորը գերի էր տարել սուրբ Խաչը, որն որ

յետոյ Խոռեմ Նոցա Թագաւորը մեծ պատուով յետ ուղարկեց Յունաց կայսեր Հերակլին, և նա 629 թուին Կոստանդնուպօլից գնաց Երուսաղէմ, և այնտեղ ինքն իւր ուսի վերայ դրած սուրբ Խաչը՝ բաղմեցրուց իւր առաջուայ տեղը, այս պատճառաւ սահմանուեցաւ տօն վերացման Խաչի Սեպ. 14 ին օր կիւրակէ:

Վարագայ Խաչի տօնախմբութիւնն է այն, որ յայտնուեցաւ Վարագ լերան (սարի) վերայ, ուր Հռովմայեցի կուսանք բերել էին Խաչափայտի մասն, և նոցա վախճանելուց յետոյ մնացել էր այնտեղ, ուր յետոյ Թոդիկ ճրպնաւորի ձեռքով յայտնուեցաւ հրաշքով և տեսիլքով. և Դ. Ներսէս կաթուղիկոսի ժամանակը 653 թուին կարգուեցաւ տօն յայտնութեան Խաչի Վարագայ լերան վերայ:

Ծանօթ. Նաւակատիք բառը նշանակում է տօն և հանդէս եկեղեցւոյ շինութեան և ուրիշ մեծ անցքի համար, ինչպէս հրէայք նաւակատիք էին կատարում իւրեանց տաճարի շինութեան պատճառաւ, այսպէս էլ մեր նախնիքը նորաշէն եկեղեցեաց համար կարգեցին երեք նաւակատիք, որ կատարւում է Վարդավառի, Վերափոխման և Խաչվերացի նախընթաց օրերին, և հանդիսաւոր տօնախմբութեան և ուրախութեան պատճառաւ՝ ուտում ենք միայն ձու, իւղ, կաթն և ձկնեղէն:

Տիեզերական ժողովք:

Առաջին տիեզերական ժողովն եղև Նիկոյ սուրբ ժողովը՝ Կոստանդիանոս թագաւորի ժամանակը 325 թուին, ուր ժողովեցան երկք հարիւր տասն և ութ Հայրապետք Արիոսի հերետիկոսութիւնը հերքելու համար, որ ուրանում էր Քրիստոսի Աստուածութիւնը. և հաստատելով քրիստոնէական հաւատոյ ուղղափառութիւնը՝ սահմանեցին հանդանակը հաւատոյ: Այս ժողովոյ տօնախմբութիւնը կատարում է մեր եկեղեցին միշտ վերացման խաչի շաբաթապահոց առաջ նոյն պահոց բարեկենդանի շաբաթ օրը:

Կոստանդնուպօլսոյ ժողովն եղև 381 թուին մեծ Թէոդոս թագաւորի օրերովը, ուր հարիւր յիսուն Հայրապետք ժողովեցան Մակեդոնեանց, Եւնոմեանց և Ապողինարեանց մոլորութիւնները հերքելու համար, որոնք ուրանում էին Հոգւոյն սրբոյ Աստուածութիւնը. այս տօնը կատարում ենք միշտ բուն բարեկենդանի շաբաթ օրը:

Եփեսոսի ժողովն եղև 431 թուին փոքր Թէոդոս թագաւորի ժամանակը, ուր երկու հարիւր Հայրապետք ժողովեցան Նեստորի մոլորութիւնը հերքելու համար, որ ուրանում էր Քրիստոսի Աստուածութիւնը, և Աստուածամայր չէր դաւանում Մարիամ սուրբ կուսին: Այս ժողովը տօնում ենք Աստուածածնայ վերափոխման շաբաթապահոց առաջ նոյն պահոց բարեկենդանի շաբաթ օրը:

Երբեմն խաչ հանելու մեղմութիւնը, որ ասում ենք յԱնուն Հօր և Որդւոյ և Հոգւոյ սրբոյ:

Երբոր ձեռքը ճակատին ենք տանում և ասում «յԱնուն Հօր» հասկանում ենք թէ Հայր Աստուած ամենից բարձր է: Երբոր ձեռքը ներքև բերելով ասում ենք «և Որդւոյ» իմանում ենք թէ Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս երկնից իջաւ, (աշխարհ եկաւ) և մարմին առաւ Մարիամ սուրբ կուսից մեր փրկութեան համար: Եւ երբոր ձախից աջ կողմն ենք տանում և ասում ենք «և Հոգւոյն սրբոյ» հաւատում ենք թէ Քրիստոս սուրբ խաչի զօրութեամբ և Հոգւոյն սրբոյ շնորհօք մեզ ձախ կողմից (դժոխքից) աջ կողմը (արքայութիւն), մեղքից դէպ 'ի առաքինութիւն, չարից դէպ 'ի բարին տարաւ: Եւ վերջը՝ երբ ձեռքը սրտի վերայ բերելով ասում ենք «Ամէն» նշանակում է՝ թէ ամենասուրբ Երրորդութեան անունն կնքեցինք (տպեցինք) մեր սրտի մէջ: Եւ թէ անունն սուրբ Երրորդութեան՝ հաստատ և անշարժ մնում է մեր սրտի մէջ: Բառս ամէն նշանակում է եղեցի եղեցի, այո՝ ճշմարիտ:

Դարձեալ խաչը քրիստոնէութեան նշան լինելով՝ հալածանաց ժամանակը քրիստոնեայք երեսին խաչակնքելով՝ միմեանց նշան էին տալիս քրիստոնեայ լինելու. և երկրորդ՝ խաչակնքելով երեսներս՝ նկարագրում ենք մեզ Քրիստոսի չարչարանքը և խաչելութիւնը, և իրև ճշմարիտ հետևող Քրիստոսի՝ խաչակից և չարչարակից ենք լինում նորան:

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Տէրունական Աղօթք։

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ զՀաց մեր հանապազորդ, տուր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ։ Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

Առաւօտեան Աղօթք։

Զարթուցեալ 'ի քնոյ կարդամ առ քեզ թագաւոր բարձրեալ, որ պարգևիչդ ես քնոյ, 'ի ծագել լուսոյ առաւօտուս, ծագեա՛ առ իս զլոյս ողորմութեան քո, զի ընդ ելից արևուն՝ արեգակնդ արդարութեան մտցէ 'ի խորս սրտի իմոյ, ճառագայթ փառաց քոց փայլեսցի 'ի միտս իմ, և տեառնազրութիւն սրբոյ Նշանիդ տարածեսցի ընդ շունչ և ընդ մարմին իմ։ Զի դու ես Աստուած իմ և Տէր, և քեզ վայել է փառք և գոհութիւն և պատիւ. այժմ և միշտ։

Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր, որ զարթուցեր զմեզ 'ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քոյ։ Զարթո զմիտս մեր արդարութեամբ առ քեզ Տէր Աստուած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն քո. եկեսցէ և բնակեսցի առ մեզ Աստուածութիւն քո. և ողորմութիւն քո հովանի և պահապան լեսցի 'ի վերայ պաշ-

տօնէից քոց։ Եւ զմեզ զծառայսս քո՝ արժանի՛ արա 'ի տուէ և 'ի զիշերի և յամենայն ժամու միշտ խորհիլ 'ի սէր պատուիրանաց քոց։ Եւ գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ (երիցս)։ Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ՝ Մայր Քրիստոսի, մատո՛ զաղաչանս մեր՝ Որդւոյ քո և Աստուծոյ մերոյ։

Փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց։

Ի տօնի Յարութեան։

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբ իւրով մեզ զկեանս պարգևեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն։

Աւետումն Հրեշտակի առ սուրբ Կոյսն։

Ուրախ լեր բերկրեալդ Մարիամ, Տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո։ Արդ բարեխօս լեր առ Տէր վասն մեր։

Առ Տիրամայր սուրբ կոյսն։

Անկանիմք առաջի քո, Տիրամայր սուրբ Աստուածածին, և աղաչեմք զանարատ զՆոյսդ՝ բարեխօսեա՛ վա-

սրն անձանց մերոյ և աղաչեա՝ զմիածին Որդիդ։ Փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոյ։

Աղօթք ճաշու։

Աչք ամենեցուն 'ի քեզ յուսան, և դու տաս նոցա կերակուր 'ի ժամու։ Բանաս զձեռն քո, և լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ կամօք քովք։

Ճաշակեսցուք խաղաղութեամբ, օրհնեալ է Տէր 'ի պարգևս իւր. ամէն։

Զկնի ճաշուն։

Տէր ցիսուս, լաք 'ի բարութենից քոց։ Տացուք գոհութիւն Տեառն Աստուծոյ մերոյ՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Լիութիւն սեղանոյս անհատ և աննուազ արասցէ Քրիստոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեաց։ Նմա փառք յաւիտեանս. ամէն։

Աղօթք յառաջ քան զդասառութիւն։

Ամենաբարի Աստուած, առաքեա՝ առ մեզ զշնորհս Հոգւոյդ քո սրբոյ, որ պարգևէ մեզ զմիտս և կազդուրէ զզօրութիւնս հոգւոց մերոց, որպէս զի մեք ընդունելով զաւանդեալ մեզ ուսմունս՝ զարդասցուք քեզ՝ Ստեղծողիդ մերում 'ի փառս, 'ի մխիթարութիւն ծնողաց մերոց, յօգուտ Եկեղեցւոյ և Հայրենեաց։

Զկնի դասառութեան։

Գոհանամք զքէն Արարիչ, զի արժանի արարեր մեզ շնորհաց քոց՝ ընդունելութեան ուսմանս. օրհնեա

զվեծաւորս, զծնողս և զուսուցիչս մեր, որք առաջնորդեն մեզ 'ի գիտութիւն բարութեան, և տուր մեզ զկարողութիւն 'ի շարունակութիւն ուսմանս այսորիկ։

Հանդստեան աղօթք։

Տէր Աստուած մեր, դու պահեա զմեզ խաղաղութեամբ 'ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի։ Ընդ սուրբ երկիւղ քո բևեռեալ պահեա զմիտս և զխորհուրդս մեր։ Որպէս զի յամենայն ժամ քև պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն։ Եւ քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ։ Այժմ և միշտ և։

Հրեշտակի խաղաղութեան յանձն արա զանձինս մեր Տէր զօրութեանց, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս 'ի տուէ և 'ի գիշերի, յարթնութեան և 'ի հանգստեան մերում. զի դու ես արարիչ լուսոյ, և հաստիչ գիշերի։ Եւ այժմ աղաչեմք զքեզ Տէր Աստուած մեր, զհանգիստ գիշերիս շնորհեա խաղաղութեամբ անցուցանել, և հասանիլ 'ի պաշտօն առաւօտու յերկրպագութիւն և 'ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանդ. այժմ և։

Երգ խաչի։

Խաչն քո Քրիստոս երկիրպագանեմք, և զսուրբ խաչելութիւնդ քո մեծացուցանեմք, և զսուրբ ցարու-

թիւնդ քո փառաւորեմք։ Եկայք հաւատացալք երկիր պաղեստինք Քրիստոսի Աստուծոյ մերոյ. վասն զի եկն 'ի ձեռն խաչին իւրոյ շնորհեաց պարգևս աշխարհի։ Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ։

Փառք սուրբ խաչիդ ալէլուիա, սուրբ Մատնութեանդ ալէլուիա. Զարչարանացդ ալէլուիա. Խաչելութեանդ ալէլուիա. սրբոյ թաղմանդ ալէլուիա. սուրբ Յարութեանդ ալէլուիա։ Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։



ՀԱՄԱՌՕՏ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԴԱՐ ԱՌԱՋԻՆ

Մատաթիայ առաքելոյ ընտրութիւնը և Հոգւոյն սրբոյ գալուստը։

Երբ Քրիստոս Տէրն մեր համբարձաւ երկինքը՝ նորա առաքեալք և աշակերտքը ժողովեցան Երուսաղեմ վերնատան մէջ, ուր առաջին անգամ հոգս տարան ընտրել մինը Յուդայի տեղ, որ սարսափելի մահուամբ վըճարեց իւր կեանքը և պակասեցաւ 'ի թուոյ առաքելոց։ Ուստի իւրեանց միջից ընտրեցին Մատաթիա և Բարսաբա և առաջ բերին ժողովոյ մէջ, աղօթք արին առ Աստուած, որ ցոյց տայ թէ ո՞րն է նոցանից առաքելութեան արժանաւորը. յետոյ վիճակ դնեցին և վիճակը ընկաւ Մատաթիային, որով և լրացաւ երկոտասան առաքելոց թիւը։

Սրանից յետոյ բոլոր հաւատացեալք միասին ժողոված վերնատանը առանձին աղօթք էին անում անդադար և սպասում էին Հոգւոյն սրբոյ գալստեանը։ Եւ ահա երբ հասաւ Պենտեկոստէի (յիսներորդ) տօնի օրը՝ յանկարծակի երկնից մի ձայն հնչեցաւ սաստիկ քամու պէս, որով լցուաւ տունը, ուր ժողոված էին աշակերտք

իբր հարիւր քսան հոգիք Տիրամօր հետ։ Երևեցան նոցա վերայ հրեղէն լեզուք, և նոյն ժամայն լքցուեցան ամենքը Հոգւով Սրբով և սկսան խօսիլ զանազան լեզու։ Նոյն Պենտեկոստէի տօնի հանդէսին ամէն կողմից շատ հրեայք էին եկած Երուսաղեմ. «Բ» Պետրոս առաքեալը միւս առաքելոց հետ սկսաւ համարձակ քարոզ տալ նոցա Քրիստոսի մահուան և յարութեան վերայ, և այս առաջին քարոզութեամբ երեք հազար հոգի դարձրուց դէպ ի քրիստոնէական հաւատը. նոյնպէս և միւս օրը երկրորդ անգամ քարոզելով՝ և 'ի ծնէ կաղին տաճարի դրանը բարձրելով՝ դարձրուց հինգ հազար հոգի։

Քրիստոնէական հաւատոյ յառաջադիմութիւնը և եօթն սարկաւագաց ընտրութիւնը։

Առաքելոց քարոզութեամբ շուտով լքցաւ քաղաքը հաւատացելովք. նոցա բարեպաշտ և մաքուր վարքը նախանձելի էր ամենին, և որպէս նոր Սիոնի (նոր եկեղեցւոյ) հարազատ որդիք, մի հաւատով միացած՝ մի սիրտ և մի հոգի ունէին։ Ինչ որ ունէին ծախում էին ամենը և փողը բերում տալիս առաքելոց, որ նոքա բաժանեն աղքատաց և կարօտելոց։ Եւ որովհետև օրէ ցօր բազմանում էր հաւատացելոց թիւը, առաքեալք ընտրեցին եօթն շնորհալի սուրբ մարդիկ, ձեռնադրեցին սարկաւագ և նոցա կարգեցին սուրբ սեղանի սպասաւոր, ուր կատարւում էր Քրիստոսի մարմնոյ և արեան խորհուրդը. նմանապէս

յանձնեցին նոցա հասարակաց սեղանի սպասաւորութիւնը և եկեղեցւոյ բոլոր ստացուածքը, որպէս զի ինքեանք ազատ լինին արտաքին հոգսերից և զբաղմունքից, որ այնուհետև առաւել ևս կարողանան իւրեանց ուշադրութիւնը դարձնել առաքելական պաշտօնին և աւետարանական քարոզութեանը։

Քրիստոսի եկեղեցւոյ առաջին հալածանքը, սուրբ Ստեփաննոսի նահատակութիւնը և Սօղոսի դարձը։

Քանի որ առաջ էր դիմում աւետարանական քարոզութիւնը (քրիստոնէութիւնը), այնքան առաւել սաստկանում էր հրէից քահանայապետաց նախանձը և հակառակութիւնը քրիստոնէից դէմ. այս պատճառաւ հրաման տուին առաքելոց չքարոզել աւետարանը և ոչ Յիսուսի Քրիստոսի անունը տալ, և նոցա սրտում ահ գձելու համար՝ բանտը դրին նորանց, բայց նոքա հրաշքով ազատուեցան բանտից և սկսան համարձակ քարոզել այն ամենը, ինչոր տեսան և լսեցին։ Ուսոտի միւսանգամ կանչեցին նոցա ատեան, ուր դատաւորք մնացում էին սպանել նորանց, բայց դատաւորներից մինը Գամաղիել անունով՝ կանգնեցաւ ատենի մէջ և խստակ սրտով սկսաւ յորդորել նորանց և ասել. «Հեռացէք այս մարդկանցից և թողէք դորանց, եթէ մարդկային է այդ բանը՝ շուտով կը քաղուի, իսկ եթէ յԱստուծոյ է, ի զուր էք աշխատում խափանել»։ Գամաղիելի այս խօսքերից համոզուելով հը-

րեայք առաջ ծեծեցին նորանց և հրամայեցին այլ եւս չխօսել և չուսուցանել Յիսուսի Քրիստոսի վարդապետութիւնը: Բայց առաքեալք խաղաղ սրտով ընդունեցին այն պատիժը, երջանիկ համարելով իւրեանց, որ Աստուծոյ անուան համար արժանի եղան այն անարգանք և հալածանքը կրել. և բաւական համարեցին այսքանս միայն պատասխան տալ նոցա թէ "Պէտք է Աստուծոյ առաւել հնազանդ լինել, քան թէ մարդկան": Ուստի չէին դադարում քարոզել և ուսուցանել Յիսուսի Քրիստոսի կենարար վարդապետութիւնը:

Սուրբ Ստեփաննոսը եօթը սարկաւագներից առաջինն էր և նշանաւոր իւր հրաշագործութեամբը:

Սա աստուածային սիրով վառուած՝ համարձակ յանդիմանում էր հրէից և երեսներին էր տալիս նոցա անկարգ չարասրտութիւնը, ուստի կանչեցին նորան ատեան, և նա երբ ատենի մէջ սկսաւ համարձակ Քրիստոսի անունը տալ՝ կատաղի հրեայք դուրս քաշեցին ատենից և քաղաքից դուրս քարկոծեցին: Բայց նա քանի որ այն սարսափելի տանջանաց մէջ էր՝ աղօթք էր անում իւր սպանողաց համար և ասում էր. "Տէր, թող դոցա զմեղս, զի ոչ գիտեն զինչ գործեն": Այս տեսակ դառն տանջանքով նահատակելով Քրիստոսի անուան համար՝ առաջին մարտիրոս և Քրիստոսի աւետարանի վկայ կոչուեցաւ:

Այն օրերին մեծ հալածանք կրեց Քրիստոսի եկեղեցին, ուստի Քրիստոսի հաւատացեալք դուս եկան Երուսաղեմից և ցրուեցան զանազան քաղաք բաց'ի առաքելոց:

Այն ժամանակը մի փարիսեցի երիտասարդ Սօղոս անունով, որ սաստիկ թշնամի էր քրիստոնէից՝ մտնում էր տները, որ տեղ որ հաւատացեալք թագ էին կացած թէ տղամարդիկ և թէ կանայք, դուս էր քաշում և բանտն էր գցել տալիս: Յետոյ առաւել ևս նախանձից զրգռուած՝ հրաման առաւ քահանայապետից, որ գնայ Դամասկոս գտնի քրիստոնէից և կապած բերի նոցա Երուսաղեմ. և մինչդեռ նա չէր հասել այն քաղաքը, յանկարծ մի լոյս փայլատակեցաւ նորա չորս կողմով, որից կուրացաւ ընկաւ գետնին, յետոյ մի սարսափելի ձայն լսաւ, "Սաւուղ, Սաւուղ, զի՞ հալածես զիս, ես եմ Յիսուս. ի զուր ես աշխատում ինձ հակառակ կենալ": Սաւուղը այս ձայնից զարհուրելով՝ հարցրեց, ի՞նչ ես կամենում Տէր, այն ժամանակը հրամայեց նորան Տէրը որ մտնի Դամասկոս, գտնի Անանիա առաքելոյն. և երբ գտաւ, մկրտուեցաւ նորանից և իսկոյն բաց եղան նորա աչքերը: Երբ Սաւուղը հաւատաց Քրիստոս և ընդունեց քրիստոնէական հաւատը, շուտով վարժուեցաւ Քրիստոսի տնօրէնութեան խորհրդոց մէջ, և սկսաւ քարոզել աւետարանը և շուտով դարձաւ գլխաւոր առաքելոց մինը:

Քրիստոսի եկեղեցին Սամարիայում և Սիմոն մոգը:

Սուրբն Փիլիպպոս՝ որ եօթն սարկաւագաց մին էր, քարոզեց Սամարիա քաղաքում, ուր շատերին դարձրեց քրիստոնեայ և մկրտեց նոցա: Այս որ լսեցին առաքեալք Երուսաղեմում, ուղարկեցին Պետրոսին և Յովհաննէսին դը-

բոշմի խորհուրդը կատարելու և հաստատելու նոցա քրիս-
տոնէական հաւատոյ մէջ։ Երբ Պետրոս առաքեալը ձեռը
դրաւ նոցա գլխին, Հոգին սուրբ իջաւ նոցա վերայ և
ընկալան հրաշագործութեան շնորհք. այն հաւատացե-
լոց մինը Սիմոն անունով, երբ տեսաւ որ առաքեալք
ձեռք դնելով մկրտուածների վերայ հաղորդում էին նո-
ցա Աստուծոյ պարգևներ, փող բերաւ նոցա և խնդ-
րում էր նոցանից ստանալ նոյն իշխանութիւնը, բայց նո-
րա անարժան տուրքը և խնդիրը մերժեց և չընկալաւ
Պետրոսը, այս պատճառաւ հոգևոր և Աստուածային բան
վաճառելը՝ Սիմոնականութիւն կոչուեցաւ Սիմոնի անունից։

Քրիստոսի եկեղեցին փոքր և մեծ Հայաստանում, Աղուանքում և Կապադովկիա։

Աւետարանի լոյսը՝ որ մինչև այն ժամանակը լու-
սաւորում էր միայն Աբրահամու որդւոց, սկսաւ տարածուել
և հեթանոսաց մէջ, սոցանից առաջինն կարելի է
համարել մեր Աբգար Թագաւորին Եդեսիա քաղաքում,
որ առաջուց լսելով Քրիստոսի հրաշագործութիւնքը և
փափագելով մարմնոյ առողջութեանը՝ դեսպաններ ու-
ղարկեց Յիսուսի մօտ և թուղթ գրեց, որոյ մէջ դա-
ւանելով նորան որդի Աստուծոյ՝ խնդրեց նորանից բժշ-
կութիւն։ Նոյնպէս հրաման տուաւ իւր դեսպաններին,
որ ղոհ մատուցանեն Աստուծոյն Երուսաղեմի տաճարում։
Դեսպանները գնացին հասան Երուսաղեմ և հանդիպեցան
Յիսուսին Երուսաղեմ մտնելու հանդէպին. և երբ կա-
մենում էին Աբգարու նամակը յանձնել նորան. մօտ գը-

նացին Փիլիպպոսին և նա խորհրդակցելով Անդրէաս ա-
ռաքելոյ հետ, երկուսը միասին յայտնեցին Յիսուսին։ Այն
ժամանակը Յիսուս ուրախութեամբ հրամայեց Թովմայ
առաքելոյն նամակին պատասխան գրել, որոյ մէջ խոս-
տացաւ, որ իւր Համբարձման յետոյ աշակերտաց մինը
կուղարկի և կբժշկի նորա ցաւը և կեանք կպարգևի
նորան և ամենին, որոնք նորա հետն էին։ Պատասխանի
հետ նմանապէս Յիսուս ուղարկեց իւր անձեռագործ
պատկերը, որոյ երկրպագութիւն տուաւ Աբգարը և սպա-
սում էր Քրիստոսի խոստմանն։ Ապա Քրիստոսի համբառ-
նալուց յետոյ՝ ինչպէս որ հրամայել էր ինքն Քրիստոս
Տէրն մեր, Թովմաս առաքեալը ուղարկեց Եդեսիա քա-
ղաք Աբգար Թագաւորի մօտ Թադէոս առաքելոյն, որ ե-
կաւ Եդեսիա, քարոզեց քրիստոնէական հաւատը, բժշկեց
Աբգար Թագաւորին և մկրտեց նորան և ժողովրդոց շա-
տերին. եկեղեցի շինեց և իւր տեղ ձեռնադրեց եպիս-
կոպոս մի մետաքսագործ—Թագաւորի խոյրարար (Թագ-
շինող) անունը դնելով Ադդէ, որին կարգեց նոցա վե-
րայ հովիւ և առաջնորդ։

Որանից յետոյ Թադէոս առաքեալը գնաց բարձր
Հայաստան, ուր այն ժամանակը տիրում էր Աբգար Թա-
գաւորի քեռորդի Սանատրուկը, սա ինքն և իւր դուստր
Սանդուխտ և ուրիշ շատերը Թադէոս առաքելոյ քարո-
զութեամբ ընդունեցին քրիստոնէական հաւատը. և նո-
ցա համար եպիսկոպոս ձեռնադրեց մի բարեպաշտ մարդ
Զաքարիա անունով և կարգեց նորան այնտեղ հովիւ.
ինքն գնաց Աղուանից կողմերը, ուր նոյնպէս քարոզեց

քրիստոնէական հաւատը, հիմնեց եկեղեցի և այն տեղից գնաց Կապադովկիա քարոզելու:

Աստուծոյ յայտնութիւնը և Քրիստոսի եկեղեցին Կեսարիայում:

Մի անգամ երբ Պետրոս առաքեալը Յոպպէ քաղաքում առանձնացած աղօթք էր անում, տեսաւ երկինքը բացուած և մի մեծ անօթ կտաւի պէս չորս ծայրից կախուած փռած էր գետնի վերայ և մէջը լեքն էին ամէն տեսակ չորքոտանիք, սողուններ և թռչուններ. այն ժամանակը մի ձայն եկաւ երկնից «Պետրոս, արի, զէն, և կեր» այս ձայնը երեք անգամ կրկնուեցաւ, և յետոյ երկինքը վերացաւ անօթը:

Երբ Պետրոսը զարմացած մնացած էր այս տեսիլքի վերայ՝ բաց արաւ Աստուած նորա միտքը, որ իմանայ, թէ երկնքի դուռը հեթանոսաց համար էլ բաց է, և ամենքը թէ հրեայք և թէ հեթանոսք պէտք է միանան և մի մարմին լինին Քրիստոսի հետ: Այն ժամանակը հաւատոյ աստուածապարգև շնորհքը տարածուեցաւ և Պաղեստինու կողմերը, նոյնպէս և Կեսարիա քաղաքում, ուր Կուռնելիոս անունով հարիւրապետը կռապաշտութեան խաւարի մէջ ճանաչելով ճշմարիտ Աստուածը, աղօթքով և ողորմութեամբ արժանացաւ Աստուծոյ պարգևաց: Մի անգամ աղօթք անելու ժամանակը Աստուծոյ հրեշտակը երևեցաւ նորան և պատուիրեց որ Պետրոսին պտռէ և լսի նորանից որ ինչ պէտք է անել: Միւս

օրը Կուռնելիոս իւր ծառայքը ուղարկեց Յոպպէ՝ Պետրոսին հրաւիրելու: Պետրոսը Հոգւոյն սրբոյ ազդեցութեամբ եկաւ Կուռնելիոսի տուն, սկսաւ քարոզել և ուսուցանել բազմութեանը՝ բացատրելով մարգարէից խօսքը և Յիսուսի Քրիստոսի գործքը: Նորա խօսելու ժամանակը Հոգին սուրբ իջաւ ամենի վերայ, որոնք լսում էին նորա քարոզութիւնը, ապա մկրտեց ամենին Յիսուսի Քրիստոսի անունով:

Եկեղեցին Քրիստոսի Անտիոքում:

Փրկչի 38 թուականին Անտիոք քաղաքում Քրիստոսի հաւատացեալք այնքան շատացան, որ աւետարանի հետևողքը նախ և առաջ Անտիոքում կոչուեցան Քրիստոնեայ: Նոյն քաղաքի հաւատացեալք ստիպեցին Պողոսին, որ նոցա տուրքը տանի Երուսաղեմ հաւատացելոց համար. այս պատճառաւ գնաց նա Բառնաբասի հետ Երուսաղեմ, և յետոյ դառնալով կրկին Անտիոք 43 թուականին՝ գնացին դէպի Կիպրոս, ուր Պափոս քաղաքում բդեշխի փոխանակ Սերգիոս Պողոսը նոցա քարոզութեամբ ընդունեց քրիստոնէական հաւատը:

Աւանդութիւն է հասարակաց, իբր թէ առաքեալը այս դիպուածով իւր Սաւուղ կամ Սօղոս անունը փոխեց Պողոս՝ նոյն իշխանի անունով, որ Սաւուղի ձեռքով հաւատաց 'ի Քրիստոս, նմանելով Հռովմայեցւոց զօրագլխաց, որ իւրեանց ձեռքի տակ նուաճած ազգաց անունը ինքեանց էին սեփհականում:

Ադդէ հայրապետի, Թադէոս առաքելոյ և Սանդուխտ կուսի նահատակութիւնը, և Ոսկեանց դարձը 'ի Քրիստոս։

Աբգար Թագաւորի մահուան յետոյ յաջորդեց նորա որդի Անանէն. սա Թողաւ քրիստոնէական հաւատը և սկսաւ կռոց երկպագութիւն տալ, որոյ համար նախատելով Ադդէ հայրապետից, սպանել տաւ նորան իբր 39 Թուին. բայց ինքն ևս փոքր ժամանակից յետոյ պատժեցաւ յԱստուծոյ անակնկալ մահուամբ։ Նորանից յետոյ Հայոց Թագաւորութեան իշխանութիւնը առաւ Աբգարու քեռորդի Սանատրուկը, որ նոյնպէս ուրացաւ քրիստոնէական հաւատը, և մտածեց տիրել բոլոր Հայաստանին. ուստի գնաց զօրքով Եդեսիա քաղաք, ջնջեց Աբգարու ցեղը և հրամայեց կռքատուները բանալ և երկիրպագանել կռոց։

Թադէոս առաքեալը այս լսելով Կապադովկիա, կամեցաւ այնտեղից յետ դառնալ Հայաստան Սանատրուկ Թագաւորի մօտ, և երբ հասաւ Միջագետաց սահմանը՝ պատահեցան նորան Հռովմայեցւոց դեսպաններ հինգ հոգի, որոնք նշանաւոր մարդիկ էին և գնում էին Սանատրուկ Թագաւորի մօտ, որոց տեսնելով Թադէոս առաքեալը քարոզեց նորանց և դարձնելով դէպի քրիստոնէական հաւատը՝ մկրտեց ամենին, և նոցանից գլխաւորը, որոյ անունը Խրիւսի էր (ոսկի) քահանայ ձեռնադրեց, որոյ անուամբ և նորա ընկերքը կոչեցան Ոսկեանք։

Երբ իմացաւ Սանատրուկը Ոսկեանց քրիստոնէութիւն ընդունելը Թադէոս առաքելոյ ձեռքով՝ կանչեց նորան Շաւարշան քաղաք և նահատակել տուաւ։ Նորա հետ նահատակեցաւ Սանատրուկի դուստր սրբուհի կոյսն Սանդուխտ քրիստոնէական հաւատոյ մէջ հաստատ մնալու համար. և շատերը ժողովրդոց սքանչելիք տեսնելով սրբուհւոյ նահատակութեան վերայ՝ հաւատացին 'ի Քրիստոս և նահատակեցան։

Բարթուղիմէոսի, Ղեւեայ և Սիմոն կանանացւոյ քարոզութիւնը Հայաստանում, և նոցա նահատակութիւնը։

Սուրբն Բարթուղիմէոս քարոզեց մեծ Հայաստանում և ուրիշ Ասիայի զանազան գաւառներում։ Հասարակաց աւանդութիւն է իբր թէ կաշին քերթելով նահատակել են նորան Աղուանքում։ Ազգային աւանդութիւնից այս յիշատակը ևս ունիմք, թէ սուրբն Բարթուղիմէոս Աստուածածնայ վերափոխման յետոյ գնացել է Երուսաղէմ, որ տեսնի Տիրամօր կուսի մարմինը, և երբ առաքեալը բաց արին տապանը՝ տեսան վերափոխուած երկինքը, ուստի Բարթուղիմէոսի թախծեալ սիրտը մխիթարելու համար՝ տուին նորան Տիրամօր պատկերը, որ հրաշքով տպաւորուած էր կիպարիս փայտի վերայ։

Այս պատկերը Բարթուղիմէոս բերաւ Հայաստան և նորանով հրաշք էր գործում։

Սա ինքն վասպուրականում քարոզելով զՔրիստոս՝

շատերին դարձրեց դէպ ի քրիստոնէական հաւատը, շինեց կանանց մենաստան և Աստուածածնայ անուամբ եկեղեցի, ուր թողաւ Տիրամօր պատկերը: Յետոյ շրջելով ներքին Հայաստան՝ շատ ժողովուրդ դարձրեց քրիստոնեայ, որոց հետ և Սանատրուկի քրոջ և նորա տան հաղարապետը: Այս լսելով Սանատրուկը՝ քերթել տուաւ Բարթուղիմէոսի մորթը և յետոյ խաչեցին Աղբակայ կողմերը:

Նոյնպէս քարոզեցին Հայաստանում Սիմոն կանանացին կամ Շմաւոն Նախանձայոյզ և Յուդայ Յակոբեան, որ և Ղևի կամ Ղէբէոս կոչուեցաւ, որոնք նահատակուեցան Որմի քաղաքի մօտ Ռշտունեաց գաւառում:

Առաջին դարու Հայոց եկեղեցւոյ հովիւք և եպիսկոպոսունք:

Սուրբն Եղիշա, Թադէոս առաքելոյ աշակերտ, որ եկաւ Հայաստան նորա հետ միասին: Սա իւր վարդապետի նահատակութեան յետոյ՝ սկսաւ միայնակ քարոզել զանազան տեղեր: Միանգամ սա ինքն իւր երեք աշակերտներով մտաւ Ուտեաց գաւառը քարոզելու. յարձակուեցան սոցա վերայ թշնամիք, մին այն աշակերտներից սպանեցին և միւս երկուսը գնացին նոցա հետ. իսկ Եղիշա գնաց Աղուանք, շինեց եկեղեցի, ուր այն ժամանակից սկսաւ Աղուանից լուսաւորութիւնը: Մի անգամ երբ նա անց էր կենում զոհարանի մօտից՝ յարձակուեցան նորա վերայ անօրէնք, սպանեցին նորան և գձեցին մի գուբի մէջ որ կոչւում էր Հոմենք: Երկար ժամանակ նորա մարմինը մնաց այն գուբի մէջ. յետոյ հանեցին տարան Միր-

հայ սուրբ ուխտը, որ այժմ կոչւում է Զրվշտիկ: Եւ յետոյ երրորդ դարուն Աղուանից Վաչագան թագաւորը կանգնեց այն գուբի վերայ մի բարձր սիւն:

Եւստաթէոս կամ Ստաթէ, սա եկաւ Թադէոս առաքելոյ հետ Հայաստան և ձեռնադրուեցաւ նորանից եպիսկոպոս և սկսաւ քարոզել Սիւնեաց երկրում և այն տեղ մեռաւ: Բայց մեր յայտնութիւնը պատմում է իբր թէ սա բերել է իւր հետ Յովհաննու Կարապետի հօր Զաքարիայի արիւնը. և Ստաթէն որ տեղ որ նահատակուել է, նոյն տեղը շինել է վանք, որ այժմ էս նորա անուամբ կոչւում է Ստաթէուս կամ Ցատթէուս վանք:

Զաքարիա, որ Թադէոս առաքելոյ աշակերտ էր, եկաւ Հայաստան իւր վարդապետի հետ, և երբ Թադէոս առաքեալը Արտաշատ գաւառը գնաց Սանատրուկի մօտ և քարոզեց Քրիստոնէութիւնը՝ ձեռնադրեց նորան եպիսկոպոս նոյն գաւառի համար, սա իւր վարդապետի մահուան յետոյ հովուեց Քրիստոսի եկեղեցին տասներկու տարի, և ապա նահատակուեցաւ Երուանդ Բ, Հայոց թագաւորից իբր 76 թուականին:

Թէոփիլոս Անտիոքացի էր, Թադէոս առաքելոյ հետ միասին Հայաստանում քարոզելուց յետոյ՝ գնացին Կեսարիա, ուր սուրբն Թադէոս ձեռնադրեց նորան եպիսկոպոս: Ոմանք կարծում են այսպէս՝ թէ Ղուկաս աւետարանիչը, որ յիշում է «Գործոց առաքելոց» մէջ քաջ Թէոփիլէ անունով, սա ինքն է, որ հռչակուել էր իւր քարոզութեամբ հեթանոսաց մէջ, և առաջինն էր Պաղեստինու ժողովում, ինչպէս պատմում է Եւսեբիոսը իւր

եկեղեցական պատմութեան մէջ։ Սա խաղաղութեամբ վճարեց իւր կեանքը 60 թուականին։

Զեմենտոս, շատ բարեպաշտ և հաւատարիմ պաշտօնեայ էր Սանատրուկ թագաւորի պալատում։ Երբ Թադէոս առաքելոյն կամենում էին նահատակել, Զեմենտոսի եղբայրը, որ դահճապետ էր, սխալմամբ կարեց իւր եղբօր գլուխը. այն ժամանակը Թադէոսը աղօթքով յարութիւն տուաւ նորան, և նա հաւատաց 'ի Քրիստոս։ Սա, ինչպէս պատմում է Զուղայեցի Յովսէփ քահանայն, Զաքարիա եպիսկոպոսից յետոյ կարգուեցաւ երկրորդ եպիսկոպոս Արտազ գաւառի, ուր տարի հովուեց եկեղեցին և յետոյ նահատակուեցաւ Երուանդ թագաւորի քուրմ եղբօրից՝ իբր 79 թուականին։

Կումանի, սա էր խորասան նահանգից Պարսիկ և մոգ, որ Բարթուղիմէոս առաքելոյ քարոզութեամբ ընդունեց քրիստոնէութիւնը և ձեռնադրուեցաւ նորանից եպիսկոպոս Հեր և Զարևանդ գաւառների վերայ։ Սա հեթանոսներից շատերին դարձրեց քրիստոնեայ, և մեռաւ խաղաղութեամբ 88 թուականին Ադուլիս աւանում, ուր մինչև ցայսօր կայ նորա գերեզմանը, որոյ վերայ շինած է փոքրիկ մատուռ, և է ուխտատեղի։

Տուբիա, սա էր, ինչպէս կարծուում է, Յովբիթայ և նորա Տուբիա որդւոյ ազգից, որ Նինուէն թողաւ, եկաւ բնակուեցաւ Եդեսիա քաղաքում։ Երբ Թադէոս առաքեալը Եդեսիա եկաւ՝ սա ընդունեց իւր տունը, նորա քարոզութեամբ քրիստոնեայ դարձաւ, և կարգուեցաւ երրորդ եպիսկոպոս Եդեսիոյ։ Սա Դոմետիանոս կայսեր հա-

լածանաց ժամանակը շատ տանջանք կրեց, և մեռաւ 94 թուականին։

Առաջին դարու մատենագիրք։

Լաբուբնեայ, որ և Լերուպնա կամ Ղերուբնա Եդեսացի դիւանագիր, որ գրեց Աբգարու և Սանատրուկ թագաւորաց վարքը և դրաւ արքունի դիւանատանը. այս պատմութեան մէջ յիշատակում է մանրամասնաբար Աբգարու հաւատալն 'ի Քրիստոս, Թադէոս և Բարթուղիմէոս առաքելոց քարոզութիւնը, և այլոց սրբոց նահատակութիւնը Անանէի և Սանատրուկ թագաւորաց ձեռքով։

ԴԱՐ ԵՐԿՐՈՐԴ

Սրբոց Ոսկեանց նահատակութիւնը, Սուքիասանց դարձը և նոցա նահատակութիւնը։

Թադէոս առաքելոյ քարոզութեան սերմունքը, որ ոռոգեց իւր արեամբ Հայաստանու երկիրը, չանցան 'ի զուր, այլ առաւել սկսան աճիլ և պտղաբերել Հայաստանում։ Սուրբ Ոսկեանք, որ Թադէոս առաքելոյ քարոզութեան պտուղքն էին, նորա մահուան յետոյ՝ դնացին Ծաղկոտն գաւառ Եփրատայ ականց մօտ, ուր շինեցին իւրեանց համար խուղեր և ճգնեցան այն տեղ քառասուն երեք տարի։ Յետոյ 92 թուին Աստուածային աղ-

դեցութեամբ իջան Արտաշատ քաղաք քարոզել Քրիս-
տոսի Աստուածութիւնը թագաւորական պալատում, ուր
Սաթինիկ թագուհւոյ ազգականներից մի քանիսը, որոնք
եկած էին Ալանաց երկրից՝ ընդունեցին քրիստոնէութիւ-
նը, մկրտուեցան Եփրատ գետի մէջ և գնացին սուրբ Ո-
կեանց հետ նոցա անապատը. նոքա ընդ ամէնն էին տա-
սըն և եօթը հոգի, որոց գլխաւորը կոչւում էր Սուքիաս,
որոնք Ոսկեանց հետ տասնեւհինգ տարի միակեցական
կեանք վարեցին:

Յետոյ 107 թուականին Հայոց Արտաւազդ թա-
գաւորը պատահելով նոցա այնտեղ, ուր ճգնում էին
նոքա, շատ աշխատեց դարձնել նորանց կրկին դէպ ի կռա-
պաշտութիւն, բայց 'ի զուր. յետոյ երբ իմացաւ թէ
Սուքիասանց քրիստոնեայ դառնալու պատճառը Ոսկեանք
են եղել, զօրք ուղարկեց և կոտորել տուաւ նորանց և Սու-
քիասանց առժամանակ թողաւ կենդանի, որոնք ամիո-
փեցին Ոսկեանց մարմինքը և ինքեանք ճգնեցան նոյն
տեղը: Բայց յետոյ այնտեղից փոխեցին իւրեանց բնակու-
թիւնը Բագրեւանդ գաւառը Սուկաւ լերան վերայ, ուր
քսան տարի աւել սրբութեամբ անցուցին իւրեանց կեան-
քը: Սորանից յետոյ Ալանաց արքայորդւոյ Դիդիանոսի
հրամանաւ 130 թուականին դառն տանջանք կրելով՝
սրով նահատակուեցան քրիստոնէական հաւատոյ մէջ հաս-
տատուն մնալու պատճառաւ:

Երկրորդ դարու Հայոց եկեղեցւոյ հովիւք և եպիսկոպոսունք:

Բաբելաս եպիսկոպոս, Կումմիի յաջորդը, որին նշանակեց Բարթուղիմէոս առաքեալը այցելու քրիստոնէից: Որպէս հաւատացեալը, նմանապէս և Բաբելասայ յաջորդք երբէք չպակասեցան Գողթան գաւառից մինչև սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, թէպէտ և շատ չարչարանք կրեցին, բայց ոչ հովիւք և ոչ քրիստոնէական հաւատը ընդմիջեցաւ:

Բարսումա կամ Պարսամ հայկազն եպիսկոպոս Եդեսիա քաղաքի, որ Տրայիանոս կայսեր ժամանակը իբրև քաջ հովիւ առաջնորդում էր Եդեսիոյ հաւատացեալոց: Սա քրիստոնեայ դարձրուց ծեր Սարբիւղոս քուրմը և նորա Բաւէա քոյրը. շատերը հեթանոսներից տեսնելով սոցա՝ դարձան քրիստոնեայ: Սարբիւղոսի և նորա քեռ նահատակութեան ժամանակը Լիւսիաս դատաւորից բռնուեցաւ և երանելի Բարսումա եպիսկոպոսը, սկսան քերել նորա մարմինը քերիչով կախաղանի վերայ: Մի և նոյն ժամանակը թագաւորական հրաման եկաւ քրիստոնէից ազատութեան մասին, որոյ պատճառաւ ազատուեցաւ նա այն տանջանքից, և յետոյ աւելի համարձակ սկսաւ քարոզել և դարձնել շատերին անհաւատներից: Ի վերջոյ հասաւ բարւոք ծերութեանը և փոխուեցաւ այս կեանքից 115 թուականին:

Բարսումա եպիսկոպոսին Եդեսիայում յաջորդեցին եպիսկոպոսունք, և բնաւ չպակասեցան քրիստոնեայք, ոչ

եկեղեցւոյ հովիւք և ոչ ևս Թադէոս առաքելոյ աթոռակալք և Ադդէ հայրապետի յաջորդք: Այս հովիւներից մին էր և Կոն կամ Կոնոս կամ Կոդնատիոս Եդեսիոյ եպիսկոպոսը՝ Դիոկղետիանոս կայսեր ժամանակը: Պատմութենէն յայտնի երևում է, որ սա 291—295 թուականին հովուել է Քրիստոսի եկեղեցին. և սորա ժամանակը Դիոկղետիանոս կայսրը հալածել է քրիստոնէից, որոնք նորա իշխանութեան տակն են եղել:

Մխիթար վանահայր (Թերևս եպիսկոպոս). սա բնակւում էր Սիւնեաց երկրում 150 կամ 170 թուականին, նոյն տեղը, որ յետոյ Թանահտայ վանք կոչուեցաւ: Սիւնեաց եպիսկոպոս Ստեփաննոսի Օրբելեան պատմութենէն երևում է որ 150 թուականին շինել է Սիւնեաց իշխանաց եկեղեցին սուրբ Ստեփաննոսի անուամբ: Նոյնպէս յիշում է և մի վանահայր Մխիթար անուամբ, որ իւր ճգնողական կեանքը անցուցել է առաքինութեամբ, որոյ մարմինը թաղել է մի բլուրի վերայ նոյն եկեղեցւոյ մօտ, որ կար մինչև Ստեփաննոս Օրբելեանի ժամանակը:

Զոթիկոս, սա էր եպիսկոպոս փոքր Հայոց Կոմանայ քաղաքի, որ հռչակուած էր Մարկոս Աւրելիոս կայսեր ժամանակը. և ըստ Եւսեբիոսի պատմաբանին ընդդիմանում էր խօսքով Մոնտանոսի հերձուածողին: Յետոյ Սեւերոս կայսեր հալածանաց ժամանակը նահատակեցաւ 160—190 թուին:

Երկրորդ դարու Հայոց մատենագիրը:

Արիստոն Բելլացի քարտուղար Արտաշէսի Հայոց

երկրորդ թագաւորի Արշակունեաց. սա գրեց Արտաշէսի պատմութիւնը և նորա թագման հանդէսը:
Ուլիմպ քուրմ Անեցի պատմագիր իւր ժամանակեայ անցից:
Յուլիոս Աֆրիկանոս ժամանակագիր, սա գրեց պատմութիւն Հայոց Եդեսիայում ժողոված:

ԴԱՐ ԵՐՐՈՐԴ

Հայոց եկեղեցւոյ հալածանքը և Աստուծոյ այցելութիւնը Հայոց ազգիս.

Աւետարանի լոյսը, որ տարածուեցաւ մեր ազգի մէջ Արդար թագաւորի ժամանակը Թադէոս և Բարթուղիմէոս առաքելոց քարոզութեամբ, աղօտացաւ, երբ կրկին զօրացաւ հեթանոսական իշխանութիւնը Սանատրուկ թագաւորի և նորա յաջորդաց ձեռքով, այս պատճառաւ հաւատացեալք արգելուած լինելով հրապարակական Աստուածպաշտութենէն՝ թաքչում էին առանձին տեղեր՝ Հայոց կռապաշտ թագաւորաց երկիւղից, որոնք հռովմայեցւոց և Պարսից պէս թշնամի էին քրիստոնէութեան. որպէս Տրդատի հայր Խոսրով թագաւորը 214 թուականին բռնում էր հաւատացելոց և անխնայ ծառայեցնում էր արքունական գործոց մէջ, և նոցանից շատերին սպանում էր քրիստոնէական հաւատոյ համար: Վերջապէս Աստուած մեզ համար պատրաստեց Լու-

սաւորիչ զսուրբն Գրիգոր, որոյ յղութիւնը Արտաշ գաւառում եղաւ, ուր էր Թոդէի տապանը, իսկ ծնունդը 257 թուին Վաղարշապատ քաղաքում:

Գրիգորի հայր Անակ՝ հեթանոս Պարթևազն իշխան էր Պահլաւունեան ցեղից: Սա Պարսից Արտաշիր թագաւորի հրամանաւ եկած էր Հայաստան Հայոց Խոսրով թագաւորին սպանելու:

Եւ երբ կատարեց նա իւր սպանութեան գործը, և չկարողացաւ փախուստով ազատել իւրեան, պաշարեցաւ Հայոց զօրքից և խեղդուեցաւ Երասխ գետի մէջ: Իսկ նորա ընտանիքը կոտորուեցան սրով բաց 'ի մի որդւոյն, որին իւր ստնտուն (ծծմեր) Սոփիա անունով ինքն հաւատով քրիստոնեայ՝ ազատեց և տարաւ Կեսարիա, ուր մկրտեցին և անունը դրին Գրիգոր: Նա Կեսարիայում բարի վարուք մնաւ մինչև 'ի տասնեւութ տարեկան հասակը, և յետոյ ամուսնացաւ և ծնաւ երկու որդի, Վրթանէս և Արիստակէս:

Երբ Անակը սպանեց Խոսրովին, զօրացաւ Պարսից Արտաշիր թագաւորը և տիրեց Հայոց երկրին, կոտորել տաւաւ Խոսրովի ցեղը, բայց Հայոց նախարարներէն մինը փախցրեց Խոսրովու որդւոց մինը Տրդատ անունով, և ազատեց նորան Կեսարիա քաղաքում, և յետոյ այնտեղից տարաւ Հռովմ, ուր մնաց Տրդատը կայսեր մօտ Լիկինոս իշխանի ձեռքին տակ մինչև 286 թուականը: Նոյնպէս և մի նախարար Օտայ անունով ազատեց Խոսրովիդուխտը և տարաւ Անւոյ բերդը, և այնտեղ պահեց ծածուկ: Այն ժամանակը, երբ Տրդատը Հռովմ էր,

Գրիգորը լսելով իւր հօր Անակայ անցքը և Խոսրով թագաւորի անիրաւ սպանութիւնը, կամեցաւ իմանալ, թէ ո՞ւր է նորա որդի Տրդատը, միտքը դնելով գնալ նորա մօտ և ծառայել՝ իւր հօր տուած վնասու փոխարէն, որ սպանեց Խոսրովին: Եւ երբ իմացաւ թէ Տրդատ արքայորդին Հռովմումն է, գնաց և իբրև անծանօթ մտաւ նորա մօտ սպասաւոր:

Դիոկղետիանոս կայսեր ժամանակը, երբ Տրդատը ցոյց տուաւ իւր քաջութիւնը Գոթացւոց Հռչէ թագաւորի դէմ, փառաւորելով կայսրէն, ընկալաւ իւր հօր թագաւորական թագը և Հռովմայեցւոց զօրքով եկաւ Հայաստան 286 թուին: Տրդատը երբ հասաւ Եկեղեաց գաւառը՝ շնորհակալութեան զոհ բերաւ Անահիտ աստուածուհւոյն, նմանապէս և Գրիգորին հրաւիրեց ընծայատար լինել կռոց. բայց նա յանձն չառաւ և յայտնի ցոյց տուաւ իւր քրիստոնէութիւնը, որ մինչև այն կէտը ծածուկ էր պաշտում: Ուստի Տրդատը բարկացաւ և շատ յորդորանաց և սպառնալեաց յետոյ՝ տասներկու տեսակ դառն տանջանք տուաւ, և երբ իմացաւ թէ Գրիգորը իւր հօր սպանող Անակայ որդին է՝ հրամայեց տանել նորան Արտաշատ քաղաքը և գձել խոր վիրապը, ուր մնաց նա իբր տասն և հինգ տարի, որ Աստուծոյ խնամքով կերակրւում էր մի բարեպաշտ կնոջէն: Այս վիրապի մէջ իբրև հոգւոյն սրբոյ դպրոցում վարժեցաւ նա աւետարանական քարոզութեան մէջ և պատրաստուեցաւ Հայոց ազգի լուսաւորիչ:

Հռիփսիմեանց նահատակութիւնը:

Այն ժամանակը Դիոկղետիանոս կայսրը կամեցաւ ունենալ մի օրիորդ կին ածելու. սա ուղարկեց խնդրակներ իւր տէրութեան մէջ ամէն տեղ որոնել մի ազնիւ և գեղեցկադէմ օրիորդ: Այն ժամանակը Հռովմում կար մի կուսանոց Գայիանեայ կուսի տեսչութեան տակ, ուր էր և նորա սան (որդեգիր) Հռիփսիմէ կոյսը Հռովմայեցի Թագաւորազն, որոյ գեղեցկութեան վերայ խնդրակները զարմացած՝ շուտով իմաց տուին կայսեր:

Այս որ իմացաւ երանելի Գայիանէն՝ վեր առաւ Հռիփսիմէ կուսին և նորա ընկերներ եօթանասուն հոգի կուսանք իւր հետ և փախաւ Եգիպտոս, այնտեղից գնացին Երուսաղէմ երկրպագութիւն տալու Քրիստոսի տնօրինական տեղեաց: Եւ յետոյ գնացին Եդեսիա, ուր երկրպագութիւն տուին փրկչական պատկերին: Վերջապէս տաժանելի չարչարանօք հասան Բզնունեաց գաւառը և եկան բնակուեցան Վաղարշապատ քաղաքին մօտ մի հընձանայարկի մէջ: Երբ Տրդատը իմացաւ Դիոկղետիանոսից նոցա գալը, նմանապէս և Հռիփսիմէ կուսի գեղեցկութիւնը, հրամայեց զօրաց պաշարել նոցա իջևանը և կուսին բռնի տանել իւր մօտ, որովհետև կամենում էր կին ածել իրան:

Բայց սրբուհի Հռիփսիմէն ընդդիմացաւ Տրդատին, և նա կանչեց Գայիանէին, որ յորդորի Հռիփսիմէին որ նորա կամացը հնազանդի: Իսկ նա սկսաւ աւելի քաջալերել Հռիփսիմէին հաստատ մնալ իւր հաւատոյ մէջ

և անարատ պահել իւր կուսութիւնը, արհամարհելով աշխարհիս անցաւոր կեանքը: Այս տեսնելով Տրդատ յուսահատեցաւ, և հրամայեց դառն չարչարանքով սպանել Հռիփսիմէ կուսին: Միւս օրը նահատակեցին նաև նորա երեսուն և երեք ընկերաց, նոյնպէս և Գայիանէին և սի իւր երկու ընկերաց հետ միասին չարաչար տանջանօք նահատակեցին:

Սրբոց կուսանաց նահատակութիւնն էր 301 թուին, սուրբ Գրիգոր լուսաւորչի խոր վիրապից դուս գալուց մի քանի օր առաջ, որ վերցրեց նոցա սուրբ մարմինները և պահեց առանձին վկայարաններում:

Երրորդ դարու Հայոց եկեղեցւոյ եպիսկոպոսունք և հովիւք:

Աղէքսանդր Եպիսկոպոս Գամրաց՝ փոքր Հայաստանում, ուր առ ժամանակ ժողովուրդը հովուելուց յետոյ՝ գնաց Երուսաղէմ Նարկիսոս եպիսկոպոսի ժամանակը, և նորա հետ կատարեց եպիսկոպոսութեան պաշտօն Նարկիսոսի խոր ծերութեան պատճառաւ, ինչպէս վկայում է Եւսեբիոս:

Մեհրուժան եպիսկոպոս Կապադովկացւոց Կեսարիա քաղաքում՝ մեծին Տրդատայ հօր խոսրով Թագաւորի ժամանակ: Սորան գրեց Դիոնեսիոս Աղէքսանդրիոյ հայրապետը, ինչպէս յիշում է Եւսեբիոս եկեղեցական պատմութեան մէջ: Յետոյ Դեկոսի և Վաղերիանոսի հալածանաց ժամանակը շատ վկայից հետ կատարուեցաւ խոսրով Հայոց արքայէն 257 թուականին:

Ակակիոս Տիգրանակերտ քաղաքի եպիսկոպոս, որ Դեկոս կայսեր ժամանակը համարձակ քարոզում էր Քրիստոսի Աստուածութիւնը, բայց անհաւատները բռնեցին և տարան Մարկիանոս հիւպատոսի առաջ, և երբ հացրին նորա վարդապետութեան մասին, նա ատենի մէջ պատմեց Քրիստոսի մարդեղութիւնը մինչև ցՀամարձումն և երկրորդ դալուստը: Հիւպատոսը բոլորովին չլսեց նորա խօսքը և գձել տաւ բանտը. յետոյ գրեց Դեկոսին, և պատասխան ընդունելուց յետոյ՝ արձակեց Ակակիոսին իւր տեղը: Նա չէր դադարում քարոզելուց և լուսաւորելով շատերին, մեռաւ խաղաղութեամբ 250—280 թուականին:

Աբքեղայոս եպիսկոպոս Հայոց Միջագետում, 260—280 թուին:

Փիրմիլիանոս՝ Որոդինէսի աշակերտ, որ շատ շնորհալի և եկեղեցւոյ հաւատարիմ լինելով՝ նշանակուեցաւ Կեսարիա քաղաքում եպիսկոպոս 251 թուին, ինչպէս երևում է Յովհաննու Կարապետի և Աթանագինեայ եպիսկոպոսի վարուց պատմութեան մէջ: Սա էր կարքեղոնացւոց Կիպրիանոս եպիսկոպոսի ժամանակը, և մեռաւ խաղաղութեամբ 272 թուականին:

Կղենէոս նոյն Կապադովկիոյ եպիսկոպոսը Աւրելիանոս կայսեր ժամանակը: Սա շատ չարչարանք քաշեց, հաղորդեց Պորփիւրոս Գուռանին Քրիստոսի մարմնոյ և արեանը, և նորան նահատակելուց յետոյ՝ նորա մարմինը դրաւ տապանի մէջ. իսկ ինքն Դիոկղեսիանոս կայսեր

հալածանաց ժամանակը Լիւսիաս դքսից շատ տանջանք կրելով՝ մեռաւ 287 թուին:

Վլասիոս Սեբաստիոյ եպիսկոպոս, որ ծնած է Սեբաստիոյ սահմաններում, ուր հաւատացելոց խնդրանօք ձեռնադրուեցաւ եպիսկոպոս և քաջութեամբ հովուեց քրիստոնէից, միշտ հաստատելով նորանց քրիստոնէական հաւատոյ մէջ: Այս պատճառաւ Ագրիկողայոս դատաւորը գլխատել տաւ Սեբաստիա քաղաքից դուրս երկու հաւատացեալ երեխայիւք մի քարի վերայ իբր 315 թուին:

Պետրոս, որ Սեբաստիոյ եպիսկոպոսաց մին էր և ընտանի բարեկամ Աթանագինեայ եպիսկոպոսին. սա քրիստոնէական հաւատոյ համար նահատակուեցաւ Սեբաստիա քաղաքի մէջ:

Աթանագինէ, քրիստոնեայ ծնողաց զաւակ, և Գրիգոր լուսաւորչի Մարիամ ամուսնոյ եղբայրը՝ Սեբաստիոյ սահմաններից: Սա վարժուեցաւ 'ի մանկութենէն զովելի վարուք և ուսմամբք: Աթանագինեայ բարի վարքը տեսնելով Սեբաստիոյ եպիսկոպոսը՝ տարաւ իւր մօտ, ձեռնադրեց քահանայ և կարգեց գործակից և տեսուչ իւր վիճակի վերայ: Եւ այսպէս Աթանագինէն իւր կոչման արժանի սկսաւ խնամարկել ժողովուրդը, որոց և բարբարոսաց գերութենէն ազատելու համար՝ գնաց նոցա հետ և ճանապարհին զանազան հրաշքներ գործեց. և երբ իմացաւ այն գաւառի եպիսկոպոսը՝ ձեռնադրեց նորան եպիսկոպոս և գերեաց ազատելուց յետոյ՝ դարձաւ իւր տեղը և ամենևին չյայտնեց իւր եպիսկոպոս ձեռ-

նադրուիլը, և այնպէս սկսաւ հովուել և մխիթարել Քրիստոսի հօտը: Ամթանագինեայ այսպիսի արի հսկողութիւնը հաւատացելոց վերայ՝ հասաւ Թագաւորի ականջը որ Բիւթանիոյ Նիկիդիա քաղաքումն էր, ուստի Ադրիկողայոս դատաւորը բռնեց նորան Թագաւորի հրամանաւ և շատ հարցուփորձ արաւ, երբ տեսաւ նորան հաստատ իւր հաւատոյ մէջ՝ վճռեց այրել նորան: Այսպէս նահատակուեցաւ սուրբն Ամթանագինէ 285 թուին: Մի քանի տարի էն յետոյ սուրբն Գրիգոր լուսաւորիչ բերաւ Հայաստան նորա նշխարները, որ Կեսարիոյ Կապադովկացւոց Ղևոնդ պատրիարքը ընծայել էր նորան:

Ղևոնդ կամ Ղևոնդիոս, սա Կապադովկացւոց Կեսարիոյ եպիսկոպոս էր, որ շատ նեղութիւն կրեց հալածանաց ժամանակը, ձեռնադրեց սուրբ Գրիգոր լուսաւորչին 302 թուին, ներկայ գտնուեցաւ Նիկիոյ ժողովում, և յետոյ խաղաղութեամբ մեռաւ:

Բաց 'ի սոցանէ՝ որոնք յիշեցան 'ի վերոյ, կային և այլ աշակերտք և եպիսկոպոսունք Հայաստանում սուրբ Գրիգոր լուսաւորչից առաջ. որպէս և Միխայէլ Ասորւոց պատրիարքը Հայաստանի հովուաց շարակարգութեանց մէջ յիշատակում է Թադէոս և Բարթուղիմէոս առաքելոց երկու աշակերտաց, Խոռն և Դաթէ, որոց անուամբ շինուած են 'ի վաղուց անտի մենաստանք Սիւնեաց երկրում և Աղուանքում, և մինչև հիմայ կոչւում են նոցա անուամբ Խաթրայ և Դաթէի վանք:

Երրորդ դարու Հայոց մատենագիրք:

Փիրմիլիանոս Կեսարիոյ Կապադովկացւոց եպիսկոպոսը, որ գրեց 240 թուին Հայոց ազգի հալածանքը խոսրով Թագաւորի ձեռքով և պատմութիւն եկեղեցւոյ, բայց չէ հասել տակաւին ձեռք:

Բարդեղան Եդեսացի, որ գրեց պատմութիւն Արտաւազդ երկրորդից սկսած մինչև Խոսրով Ա:

Միւս առաքելոց քարոզութիւնը և մահը:

Պետրոս առաքեալը Պոնտացւոց, Կապադովկացւոց և Բիւթանացւոց կողմերը քարոզելուց, և Անտիոքայ աթոռը հաստատելուց յետոյ՝ 46 թուականին գնաց Հռովմ, ուր Ներոնի հալածանաց ժամանակը բռնուեցաւ, նոյնպէս բռնուած էր նաև սուրբն Պօղոս, և երկուսն էլ միասին խորը բանտի մէջ լինն ամիս մնացին: Պահապաններից երկուսը, երբ տեսան առաքելոց հրաշագործութիւնքը՝ ընդունեցին քրիստոնէական հաւատը և մկրտուեցան, որոց հետ և քառասուն եօթը հոգիք, որոնք նոյն բանտումը բռնուած էին:

Հաւատացեալք խնամք տարան առաքելոց աղաղութեանը, որով Պետրոս դուրս եկաւ բանտից. բայց կրկին ետ դարձաւ բանտը, մահու նուիրելու իւր անձը:

Այն ժամանակը Հռովմայ դատաւորները վճռեցին մահու մատնել երկու առաքելոց էս, որոնք մի և նոյն օրը ընկան նահատակութեան պսակը 66 թուականին՝

Պօղոս դլխատուելով, իսկ Պետրոս խաչակից լինելով Քրիստոսի:

Սուրբ Յովհաննէս աւետարանիչը մնաց փոքր Ասիա և հիմնեց Եփեսոսի եկեղեցին, ուր հարիւր տարեկան մեռաւ փառաւոր մահուամբ:

Սուրբն Անդրէաս, որ ըստ մարմնոյ սուրբ Պետրոսի եղբայր էր, շրջեցաւ աւետարանը քարոզելով Սկիւթացւոց, Եթովպացւոց երկիրները, և խաչակից եղև Քրիստոսի:

Սուրբն Փիլիպպոս Սկիւթացւոց քարոզելուց յետոյ՝ գնաց Տրապօլիս Փռիւգիոյ, ուր Տրայիանոս կայսեր ժամանակը նահատակուեցաւ ութսուն և եօթն տարեկան հասակի մէջ:

Սուրբն Թովմաս գնաց Մարաց և Պարսից քարոզելու, ուստի ուղևորեցաւ դէպի Հնդկաստան, ուր առաքելական աշխատութեամբ՝ մեռաւ փառաւոր մահուամբ և նոյն տեղը թաղուեցաւ. ըստ աւանդելոյ Յայսմաւուրքի՝ նա Հնդկաստանում մեռելուց յետոյ՝ նորա մասունքները բերին առաջ Ասորեստան և անտի Հայոց Աղձնեաց երկիրը:

Սուրբն Մատթէոս աւետարանիչ, որ երբեմն մաքսաւոր էր և Ղևի ալփեայ էր կոչւում՝ սա իւր քարոզութիւնից առաջ՝ Երուսաղեմի հաւատացելոց խնդրանօք գրեց աւետարանը, և յետոյ շրջելով շատ աղգաց մէջ՝ հասաւ բարբարոսաց երկիրը, ուր փառաւոր մահուամբ նահատակուեցաւ:

Սուրբն Յակոբ կրտսեր, որ ըստ ոմանց կոչւում էր

Յակոբ Ալփեան և համարւում էր Մատթէոս աւետարանչի եղբայր, Հրէից և Հեթանոսաց քարոզելուց յետոյ՝ Ասորւոց երկրում կատարեցաւ,

Սուրբն Մատթիա՝ որ Աստուածային հրամանաւ ընտրուեցաւ երկոտասաներորդ առաքեալ, զանազան երկիրներում աւետարանը քարոզելուց յետոյ՝ գնաց դէպի Հրէաստան, ուր վճարեց իւր կեանքը մարտիրոսական մահուամբ:

Զեբեդիայի որդի և Յովհաննէս աւետարանչի եղբայր սուրբ Յակոբ երէցը. որ Պաղեստինում աներկիւղ քարոզում էր Քրիստոսի Աստուածութիւնը, Հրէից յորդորանօք բռնեցաւ Հերոդէս չորրորդապետից և Կեսարիայում սրով նահատակուեցաւ:

Նախնի Քրիստոնէից բարեկարգութիւնքը և նոցա Աստուածպաշտութիւնը:

Քրիստոնէից մէջ նախապատիւք, որ կոչւում էին երէցք, եպիսկոպոսունք, քահանայք և սարկաւագք խնամատար էին հասարակաց ընչից և հոգս էին տանում հաւատացելոց պիտոյից համար, աղքատաց կերակուր էին բաժանում և հիւանդաց խնամք էին տանում: Յորդորում էին մեծատանց որ որդեղիր վեր առնեն չքաւորաց որդիքը, որբոց և այրեաց և աքսորուածների համար դրամներ էին ժողովում: Այն ամենայն խնամքը և ձեռնտուութիւնքը, որ նոքա անում էին միմեանց, համարեա թէ մի անլուծանելի սիրոյ շղթայով կապում էին նորանց միմեանց հետ: Եւ եթէ նոցա մէջ մի տարա-

ձայնութիւն էր ծագում, ինչպէս Պօղոս առաքեալը խրատում է՝ դատաստանը պէտք է լինէր իրանց մէջ, և որովհետև կարելի չէր որ ամէնքը դատաւոր լինէին և կարողանային որոշել դատը, ուստի երէցները սովոր էին դատաւոր լինել և խաղաղացնել շփոթը: Առաջ քան եկեղեցւոյ պաշտօնեայ ձեռնադրելը՝ պահք պահել և աղօթք էին անել տալիս նորանց:

Առաքեալք ուշադրութեամբ ընտրում էին միայն նորանց, որոնք կոչւած էին յԱստուծոյ 'ի քահանայական աստիճան: Ոչ մէկին չէին ձեռնադրում առանց ճիշդ քննութեան. Մինչև անգամ Պօղոս առաքեալը խրատում էր ընտրել վարուք և բարուք բարեհամբաւ տանուտէրերին, ոչ միայն հաւատացելոց, այլ և մինչև անգամ հեթանոսաց մէջ: Նաև քահանայից դէմ չարախօսութիւն չէին ընդունում առանց երկու կամ երեք վկայից:

Կիւրակէ օրը հաւաքւում էին մի հասարակ մարդոյ տուն, ուր պէտք է ամէնքը գտնւէին. առաջ կարդում էին սուրբ գիրքը, և յետոյ առաքեալք կամ երէցք խրատում էին և ուսուցանում ժողովրդոց: Նրանից յետոյ բաժանում էին հաւատացելոց սրբաղօրծեալ հացը (այսինքն Քրիստոսի մարմինը և արիւնը) և յետոյ ամէնքն էլ միասին գնում էին հասարակաց սեղան և ճաշ էին ուտում, որոյ անունը կոչւում էր Ագապ, այսինքն սէր:

Բացի այն եօթն սարկաւագաց, որոց վերակացու կարգեցին առաքեալք հաւատացելոց հոգևոր և մարմնաւոր պիտոյքը կատարելու համար՝ կային նմանապէս

կանայք, որ Սարկաւագուհիք էին կոչւում, և որոց ընտրութիւնը նոյնպէս ձեռք դնելով և աղօթքով էր լինում: Սոքա կարգւած էին միմիայն կանանց կրօնական պաշտամանց համար, պատճառ որ՝ պարկեշտութիւն պահպանելու համար, հրաման չէր, որ սարկաւագները պաշտօնակատար լինէին կանանց:

Երբ Քրիստոսի եկեղեցին սաստիկ հալածանաց մէջ էր, հասարակաց աղօթից կարգաւորութիւնը հանդիսաւոր չէր կատարւում, ինչպէս մեր ժամանակը: Թէպէտ քրիստոնեայք այն ժամանակը հոյակապ տաճարներ չունէին, այնուամենայնիւ նոքա հաւաքւում էին տեղ տեղ, ուր կարողանում էին կատարել իրանց Աստուածպաշտութիւնը, որ կոչւում էր Եկեղեցի կամ Ժողովարան, Աղօթարան և Տուն Աստուծոյ: Հալածանաց ժամանակը թաք էին կենում և առանձնանում էին դեռնափոր տեղեր և կամ սուրբ վկայից դամբարաններում:

Աստուածպաշտութիւնը սովորաբար սկսում էին սաղմոսերգութեամբ, յետոյ կարդում էին մի քանի գրքերից հին և նոր կտակարանից, որ յետոյ եպիսկոպոսը բացատրում էր ժողովրդեան պարզ և դիւրին բառերով: Սորանից յետոյ աղօթք և մաղթանք անելով՝ կիւրակէ օրերը ոտնակացութեամբ, իսկ միւս օրերը երկրպագութեամբ և ծնրադրութեամբ կատարում էին Քրիստոսի մարմնոյ և արեան խորհուրդը, որին մասնակից էին լինում բոլոր հաւատացեալք:

Ամենայն կիրակէ օրը տօնական հանդէս էր համարուում նոցա համար, բոլոր օրը անց էին կացնում Աստուածպաշտութեամբ: Նոյնպէս յարգում էին Զորեքշաբթի և Ուրբաթ օրերը, առաջինը՝ որպէս Քրիստոսի մատնութեան օր, և երկրորդը՝ Փրկչի մահուան և խաչելութեան օր: Զատիկը և Պենտեկոստէն նոցա երևելի և դլխաւոր տներն էին: Շատ եկեղեցիք ևս կառարում էին սուրբ վկայից հատակութեան տօնը, որոց չարչարանքը և մահը ծանօթ էր նոցա, և կամ որոնք նահատակուած էին նոյն քաղաքում:

Մկրտութիւնը քրիստոնէութեան դուռն էր համարուած, և մկրտում էին մանուկներ և չափահասներ ևս, որոնք միանդամ Հրէից և հեթանոսներից յօժարում էին ընդունել քրիստոնէութիւնը: Մկրտելուց առաջ ուսուցանում էին նոցա քրիստոնէական հաւատոյ ուսմունքը, և բաւականին վարժելուց յետոյ՝ մկրտում էին նոցա աղօթքով և պահք պահել տալով:

Եթէ մի մարդ ծանր յանցանք էր գործում, դրրօրինակ կռապաշտութիւն կամ մարդասպանութիւն կամ շնութիւն կամ ուրացութիւն, սաստիկ և երկարատև ապաշխարութեան տակ էր ընկնում, ուստի առաջ պէտք էր հրապարակաւ խոստովանէր իւր մեղքերը հաւատացելոց առաջ, յետոյ քանի մի տարի պէտք էր ապաշխարէր զրկուած լինելով սուրբ հաղորդութիւնից: Ապաշխարութեան կարգը կատարելուց յետոյ՝ թոյլ էին տալիս մտնել հաւատացելոց ժողովոյ մէջ և կանգնել նոցա հետ աղօթից ժամանակը:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/XI. 1922
ИМЕНИ А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

3369

3263